



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

19253

19254

891.99

4-97



Կ Ա Ղ Ա Ն Դ Ձ Է Ք

Ա Ռ Ա Վ Ք

Ծ Ա Ղ Կ Ս Ք Ս Ղ Ք

Հ. ՔԵՐՈՎՔԷԻ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Ի Ս Թ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ց

Printed in Turkey

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի Ս Ո Ւ Բ Ե Ղ Ա Ջ Ա Ր

Printed in Turkey

1876

*Ս. Մանուկյան*

*1876 թ. հունիսի 16*

*Բ-88*

Կ Ա Ղ Ա Ն Դ Ձ Է Ք

891.99

Բ-97

*Մ.*

Ա Ռ Ա Կ Ք

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ Ք

Հ. ԲԵՐՈՎԵՆԻ Վ. ԲՈՒՇՆԵՐԵԱՆ

Ի Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Յ



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի Ս ՈՒՐԲ Դ Ա Ջ Ա Ր

1876

4493



1214  
39

ԱՌ ՄԵՆԱԳԱՏԻ

ԱՂՍ. ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐԻՉԵԱՆ ԿԱՖԵՏԵՅԻ

ՆՈՒԻՐԵԱԼ

2003

2003

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յանյիչատակ ժամանակաց սկսեալ մինչև մեր օրերը, միշտ իմաստնոց յարգի և ընդունելի եղած է կենդանեաց և անշունչ արարածոց բերան խօսք դնել, և անոնց օրինակովը՝ մարդկային տկարութիւնները և պակասութիւնները ուղղել. որով զրեթէ ամեն հին և նոր ազգաց մէջ կը գտնուին Սրակներ. զանոնք կարգաւորող և կարգաւորեալ ոճով զրի առնողներն ալ ասուեր են Սրակախօսք: Ինչպէս Արաբացիք և Թուրքք ունեցեր են իրենց Լորմանք և Նասրէտտինը, Յոյնք իրենց Եսովպօսը, Լատինք իրենց Փեդրօսը, Գաղղիացիք իրենց աննման Լաֆօնթէնը, Գերմանացիք իրենց Ղէսօինկը և Ռուսք իրենց Քուխովը. այսպէս մեր ազգն ալ ունեցեր է ժամանակ ժամանակ իր առակախօսները, որոց մէջ ոմանք ընտիր և գեղեցիկ հայկաբան լեզուով, և այլք հնարազիւտ իմաստիւք զրեր են. ինչպէս Մխիթար Գոլը, Ողիմպիանու առակաց հեղինակն և Վարդան:

Մեր օրերը գրուած և հրատարակուած առակագրոց մէջ նշանաւորք են Փեղերոսի հայերէն թարգմանութիւնն և Վրոյրի Որմզդանայ առակներն . այլ ասոնք երկուքն ալ գրաբար լեզուով գրուելուն պատճառաւ , ամենուն իմանալի չեն : Քաղիով ռուս անուանի առակախօս հեղինակին՝ ամբողջ հայերէն ընտիր թարգմանութիւնն աշխարհաբար լեզուով , մեր արդի լեզուին և մատենագրութեան ճոխութիւն է :

Սկզբան առակախօսք իրենց առակները պարզ և արձակ լեզուով գրեր են , որոց և մեղի ժամանակակից գերմանացի լէսսինկ առակախօսը հետևող գտնուեցաւ , որ և կը պախարակէ այլոց ոտանաւոր տողերով բանաստեղծական ոճը . այլ հասարակաց միշտ ընդունելի և ախորժելի եղած են ոտանաւոր առակներն : Այս ոճով առաջին գրողն եղած է Փեղերոս՝ Ալգոստոս հուլիմայեցի կայսեր ազատագիրն , որ Եսովպոսի արձակ առակները՝ բանաստեղծօրէն ոտանաւորի առնելով , ախորժելի ընծայած է բանասիրաց . նոյն յոյն Եսովպոսին առակները , մեծաւ մասամբ Գաղղիացւոց լաֆոնթէն առակախօսն՝ իր հայրենեաց լեզուին ընտիր ոճերով բանաստեղծաբար գրելով՝ անմահացուցեր է իր անուան . նոյն առակները գեղեցիկ ոտանաւոր տողերով գրած է և ռուս առակախօսն Քաղիով . նոյնպէս համարեալ թէ արած են և այլ աղգաց առա-

կախօսք , որով և առակք աւելի յարգաւած և մեծապէս ալ օգտակար եղած են և կ'ըլլան տղայոց համար : Վասն զի տղայք ոտանաւոր գրուած առակները , ոչ թէ միայն ախորժելով կը կարգան , այլ շատ հեղ և 'ի բերան կը սորվին . և այս տղայոց առակ սորվիլը կամ լաւ ևս սորվեցնելը , գրեթէ դաստիարակութեան մասն սեպուած է : Եւ որովհետև աղգիս մէջ տակաւին չէ հրատարակուած առակաց հաւաքում մը՝ յայլ և այլ հեղինակաց , և այն ալ աշխարհիկ լեզուով , այս պատճառաւ և մանաւանդ յորդորանօք Աղա Ներսէս Պետրիղեանի , որոյ անուան նուիրեալ է գրքոյիս , այլևայլ ժամանակ թարգմանաբար գրած առակներս 'ի մի հաւաքելով այս փոքրիկ հատորիկս ձեռացուցի , յուսալով որ պիտանի ծառայութիւն մ'ըլլայ աղգային մանկանց :

Այս առակներէն ոմանք Բաղմալիպին մէջ տպուած են . մեծաւ մասամբ հետևողութիւնք են եւրոպացի առակախօսից . ինչպէս Եսովպոսի , Փեղերոսի , Քաղիովայ , լաֆոնթէնի , Յորիանու և այլոց . կան և քանի մը ինքնազիր առակներ ալ : Երեք մասն բաժնեցի գրքոյիս , տղայոց զիւրութեան համար . առաջինին մէջ՝ համառօտ զիւրիմաց առակները ամփոփելով , երկրորդին մէջ՝ երկար և բարձրագոյն իմաստով առակները , իսկ երրորդին մէջ քանի մը գրաբար առակներ , միայն օրինակի համար :



Գրոցս անունը կադանդէք գնելուս  
 սլատճառն է որ՝ ծնողք ալ իրենց տղայոց  
 այս համառօտ և զիւրազին գրքոյիլ կա-  
 դանդէք ընծայեն իբրև ՚ի նախնական կըր-  
 թութիւն մեր հայրենեաց լեզուին և ՚ի  
 խրատ առողջ բարոյականի:

Եթէ համառօտ գրքոյիս ունենայ յարգ  
 ազգայնոց առջև և ծառայէ իր վախճանին,  
 անշուշտ ուրիշ անգամ աւելի ճոխացեալ  
 ՚ի լոյս կ'ընծայի՝ յօգուտ ազգային ման-  
 կրտօղին:



Յ Ա Ն Կ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա	— Մանկիկ և Թուշնիկ . . . . .	1
Բ	— Ծիծեռնակ . . . . .	3
Գ	— Կաղնի և Եղէգն . . . . .	4
Դ	— Ճսրուռն և Մրջիւն . . . . .	6
Ե	— Աբլոր և Մարգրիտ . . . . .	7
Զ	— Առիւծն յՈրսի . . . . .	8
Է	— Առիւծ ծերացեալ և Էշ . . . . .	9
Ը	— Կառու և Մոխակ . . . . .	10
Թ	— Գայլ և Աղուէս . . . . .	12
Ժ	— Մարի և Աբուրա . . . . .	13
ժԱ	— Գեղացի և Յձ . . . . .	15
ժԲ	— Ծղրիգ . . . . .	16
ժԳ	— Նշգարի և Լուբիա . . . . .	17
ժԴ	— Աղուէս և Այծ . . . . .	19
ժԵ	— Հաւ, Աղուէս և Որսորդ . . . . .	22
ժԶ	— Մատղաշ Ծառը . . . . .	23
ժԷ	— Առիւծ, Գայլ և Աղուէս . . . . .	25
ժԸ	— Պոչատ Աղուէս . . . . .	27
ժԹ	— Կառու և Մկներ . . . . .	28
Ի	— Ագուաւ և Աղուէս . . . . .	30

7	ԻԱ.	Հեղեղ եւ Վտակ . . . . .	31
	ԻԲ.	Եղնիկին եղ ջիւղներն . . . . .	32
	ԻԳ.	Գայլ, Այծ եւ Ուլ . . . . .	34
	ԻԴ.	Սնասարսճ Զորին . . . . .	35
	ԻԵ.	Նասպաստակք . . . . .	37

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

	Ա.	Ճշմարտութիւն եւ Առասպել . . . . .	39
	Բ.	Կապկին մոգական Լաստերը . . . . .	41
	Գ.	Մաղկունք . . . . .	44
7	Դ.	Երկու ճամբորդք . . . . .	46
	Ե.	Գառնուկ եւ Գայլ . . . . .	48
	Զ.	Մինգական Լեռն . . . . .	49
	Է.	Աղամորդի, Առիւծ եւ Կատու . . . . .	50
4	Ը.	Աղուէս եւ Խաղող . . . . .	54
	Թ.	Սնտառ եւ Կրակ . . . . .	55
8	Ժ.	Ոչխար եւ Շուն . . . . .	58
	ԺԱ.	Էջիտրհրդատու . . . . .	59
	ԺԲ.	Մեծատուն անմիտ եւ Աղքատ խմստուն . . . . .	61
	ԺԳ.	Խաղթողի շինուած բերդ . . . . .	63
	ԺԴ.	Ուղտք եւ Էջ . . . . .	65
	ԺԵ.	Առիւծ եւ Մուն . . . . .	67
	ԺԶ.	Գայլ եւ Մուկն . . . . .	69
	ԺԷ.	Խորհուրդ կենդանեաց . . . . .	71
4	ԺԸ.	Կտակ երկրագործին . . . . .	74
	ԺԹ.	Աբլոր, Կատու եւ Մուկն . . . . .	75
	Ի.	Հիւանդ Գայլին՝ Կռունկ բժիշկ . . . . .	78
	ԻԱ.	Գեղացին եւ Մահ . . . . .	79

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

	Ա.	Գառնուկ եւ Այծք . . . . .	81
	Բ.	Կաղնին եւ Եղէգն . . . . .	82

	Գ.	Էջ եւ Սոխակ . . . . .	84
	Դ.	Արեգակն խօսնայր եւ Գորտք . . . . .	86
	Ե.	Այծ եւ Որոջ . . . . .	87
	Զ.	Գորտք ինդրեն Թագաւոր յԱրա մաղղայ . . . . .	89
	Է.	Չի առ Արամաղդ . . . . .	93
	Ը.	Տնաչէն Ատտիկեցին . . . . .	94

Printed in Turkey

ԱՌԱԿՔ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա

ՄԱՆԿԻԿ ԵՒ ԹՌՁՆԻԿ

ՄԱՆԿԻԿ

Արի, եկ ինձ, սիրուն թըռչնիկ,  
Նայե զանդակըս գեղեցիկ.  
Քեզի համար նոր քաղեցի  
Պըտուղ ծաղիկ գեռ ցօղալի:

ԹՌՁՆԻԿ

Աշխոյժ Մանկիկ, բաղդիս գոհ եմ,  
Ազատութիւնըս կը սիրեմ:  
Ինձի համար իմ խեղճ բունիկ,  
Լաւ քան զվանդակդ է գեղեցիկ:

## ՄԱՆԿԻԿ

Սիրուն թըռչնիկ, զըւարթ գարնան  
Շուտ կը հասնի տըխուր վախճան.  
Ինչ պիտ' անես դու, երբ հովէր  
Մերկացընեն ամեն ծառեր:

## ԹՈՉՆԻԿ

Թռչիմ երթամ ի հարաւ կոյս,  
Ուր գեղեցիկ օգբ են և բոյս.  
Ապա դարձեալ կու կամ գարնան,  
Նրգէլ քեզի երգ զանազան:

## ՄԱՆԿԻԿ

Անտէր թըռչնիկ, քեզ ո՞վ, աստ,  
Շիտակ ճամբու ցոյց պիտի տայ.  
Ծովէն անդին ինչպէս կ'անցնիս.  
Կեցիր իմ քովս, հանգիստ կ'ապրիս:

## ԹՈՉՆԻԿ

Ո՛ր և իցէ վըտանդ փորձանք  
Լաւ է ինձի քան քու կոտորանք.  
Իսկ անմոլար ինձի ճամբայ  
Վերէն Աստուած ինք ցոյց կու տայ:

## Բ

## Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Ասա դու ինձ, ո՞վ Ծիծեռնիկ,  
Նրբոր գարունըն գեղեցիկ  
Կու գայ դաշտերըս զարդարէ,  
Դու ո՞ր հեռու աշխարհներէ  
Կ'ելնես կու գաս մինչ ի մեր գեղ,  
Նրգէր երգէլ յանոյշ գեղգեղ:

Անցեալ տարի՝ երբ ցուրտ աշուն  
Խամբեց վայելք մեր դաշտերուն,  
Բարև մընայ արիւր գացիր,  
Կանաչացաւ նոր նոր երկիր.  
Ատիկեցիր դարձեալ գարու  
Շէն շէն խօսել ու երգելու:

Այլ ո՞ր գիտուն քաջ առաջնորդ  
Յուցընելով ճամբագ ուղղորդ,  
Առաւ ըզքեզ մինչ հօս բերաւ  
Աստ ինձ դու, ո՞վ սիրուն հաւ,  
Որո՞ւ ձայնէն լուսնամուրթուն  
Առաւօտներ շուտ կ'ելնես դուն:

Ծովէն ասդին մեր գեղերուն,  
Ուր քեզ սպտորաստ կան ծածք ու բոյն,  
Ո՞վ քեզ ցուցուց շիտակ ճամբան:  
Քեզ ո՞վ ասաց որ ձըմեռուան  
Յուրտն ու սառոյց՝ մեր լեռներէն  
Ու դաշտերէն հեռացեր են:

Գիտեմ, գիտեմ, ո՞վ Միծեռնակ,  
Նա քեզ ասաց, նա միայնակ՝  
Որ նորոգէ զիւր բասեղծուած,  
Որոյ կու տամք անուռն Աստուած.  
Նա բընաւից Տէր է գիտուն,  
Նրկրի, մարդուս և ամենուն:

## Գ

## ԿԱՂՆԻ ԵՒ ԵՂԵՂՆ

Կաղնին՝ անգամ մ'առ Եղէղն  
Գարձեր կ'ասէր. — « Թըշուառ հէգ,  
« Բընութեան դէմ գանգտելու  
« Որչափ պատճառ ունիս դու.  
« Պըզտի ճընճղուկ մ'ալ քեզի  
« Խիստ ծանրը բեռ կ'երևի: —  
« Իմճըղերէս կախուած բունով  
« Կ'ասարին թըռչունը հարիւրնեբով: —  
« Մինչդեռ հաղիւ թեթեւ հովիկ  
« Շարժէ լըճին երեսն հեղիկ,  
« Դու կէս մէջբով ասդին անդին,  
« Կը չարչարուիս անօգնական.  
« Իսկ էս արնկած ճակատս յերկին,  
« Կ'արհամարհեմ ամեն բան: —  
« Թող աշխարհիս չորս կողմէն  
« Ենեն մըրրիկք ինձի գէմ: —  
« Արի, եկու իմ շուքիս տակ,  
« Ուրիշ բուսոյ հետ համարձակ,

« Ու մի հովէն ծովէն ծեծուած  
« Այգպէս մեննիս ճըռգած չորցած: » —  
« Հեղուկ Եղէղն ասոր գէմ,  
— « Քեղի կարճ խօսք մ'ասաց, զուրցեմ:  
« Դու իմ վըբաս շատ հոգ չանես,  
« Գանգատելու բան չունիմ էս.  
« Իրաւ հովէն կը ծըռիմ,  
« Բայց միշտ աւանց կոտրելու  
« Նորէն կ'եննեմ կը շրակիմ:  
« Այլ թէ յանկարծ ծըռին դու... —  
« Այս ասելու ատեն՝ իրաւ,  
« Փոթորկաց դուռը բացուեցաւ:  
— « Աշխարհք աշխարհք ըլլալէն վեր  
« Կարծես այսպէս հով էլած չէր:  
« Իսկոյն Եղէղն խոնարհ  
« Մուտեցաւ գետնի հաւասար.  
« Իր տեղ շիտակ կենար Կաղնին  
« Նըման Մասեաց բարձր սարին:  
« Հովն կատաղած մէկ մ'ալ փըջեց,  
« Արմատաբի քաշեց հանեց  
« Չայն՝ որոյ գըլուխ յամպերն ի վեր  
« Ոտքերն ի յանդունդըս կը հասնէր:

## Դ

## ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻԻՆ

Շատխօս ճըպուռն ամառն ի բունն,  
Առաւօտէ մինչ իրիկունն,  
Ժիժի, ժիժի, բերանաբաց  
Անհոգ, անխոյժ ժիւր ճըռճըռաց:  
Իսկ երբ տաքուկ օրերն անցան,  
Նորա երգերն ալ դադրեցան:  
Չորս դին սառած՝ գետին ու ջուր,  
Ուստի գըրաներ նա կերակուր:  
Ճարը հատած, յուսահատած,  
Հընարբ մը մտքն ընկաւ յանկարծ,  
Ելաւ Մըրջմն գուռը գընաց. —

— « Թըբ Թըբ, Թըբ Թըբ. » — « Ո՞վ է ան. » —

— « Ճըպուռն է՝ քու բարեկամ. »

« Դըռնիկըդ բաց, Մըրջմնիկ խաթուն: » —

Շուտով բացաւ գուռը, Մըրջմն.

Երեսն ի վայր ընկաւ ճըպուռն.

— « Մըրջմն, ասաց, հոգւոյդ սիրուն,

« Տուր ինձ կըտոր մը կերակուր,

« Թէ չէ մեռնիմ ես, ո՞չ ի զուր: » —

— « Ի՞նչ, ուտելու բան չունիս: » —

Ճըպուռն ասաց. « Լըսէ հոգիս,

« Քանի որ տաք օրերն անցան՝

« Փորըս չընկաւ պատառ մը բան: » —

— « Հայպ ամառն ու գարուն

- « Ի՞նչ արիւր այն տաք օրերուն: » —  
— « Մի սըրդողիւր, ասաց ճըպուռն,  
« Ես կ'երգէի այն տաքերուն: » —  
— « Չեմ սըրդողիւր, իմ ի՞նչ հոգս է,  
« Ուրեմն հիմ'ալ գընա՛ պարէ: » —  
Այսպէս Մըրջմնն ասելով,  
Գոցեց իր գուռը շուտով:

Երիտասարդ անգործ քալող  
Ի ծէրուժեան կ'ըլլայ մուրող:

## Ե

## ԱՔԼՈՐ ԵՒ ՄԱՐԳՐԻՏ

- Կըսկըռացող Ա. քըր աղբար  
Քըրքըրելով աղբիւս վեր վար,  
Գըտաւ Մարգրիտ մը կըս-կըրոր.  
Շատ մեծագին, շատ ալ աղուոր.  
Բայց եկ տեսնենք ի՞նչ գատաստան  
Կըտրէ խեղճն անոր վըրան:  
— « Տեսքը գէշ չէ, դոյնն ալ սիրուն,  
« Բայց չէ տըւած սոցա Բնուժիւն  
« Կըշտացնելու ալ զօրուժիւն.  
« Այս բաներուս փուճ'ե խաբող՝  
« Մեայն անխելք մարդիկ տան փող.  
« Ինձի համար հատ մը կորեկ  
« Ասկէ շատ վեր ունի արժէք.  
« Տեսք ալ չունենայ,  
« Ուտելու կու դայ: » —

Աքըրբիս խեղբէն  
 Մարգիկ ստեղծու չեն,  
 Եթէ իրենց բան չեն արժեք,  
 Ոչ գիտու թիւնք, ոչ լեզուներ:

## 2

## ԱՌԻԻԾՆ ՅՈՐՄԻ

Առիւծ և Գայլ, Աղուէս ու Շուռ  
 Կազմեցին նոր ընկերութիւն.  
 Իրարու հետ դաշինք գըրին,  
 Որ զատ զատ ինչ որ որսան՝  
 Հասարակաց գայ ի սեղան,  
 Եւ հաւասար աւանուն բաժին: —

Չեմ գիտեր ո՛ւր և կամ ի՛նչպէս,  
 Մէկ մեծղի այժ մ'որսաց Աղուէսն:  
 Լուրը շուտով լըսուեցաւ,  
 Ընկերքն հասան ըշտապաւ:  
 Առիւծ բացած ճիրաններ  
 Նայեցաւ մէկ մ'իր չորս գին.

— « Մենք, աղաք, ենք չորս ընկեր »,  
 ԶՈրան ալ բաժնեց չորս բաժին.

« Առաջինին էս եմ աւեր,

« Ինչպէս որ մեր գաշինքն էր.

« Դարձեալ երկրորդն ալ ինձ կ'իյնայ,

« Զի թագաւոր եմ ձեր վըրայ.

« Երրորդ բաժինն ուժովինն է,

« Ո՛վ է ուժով, թող գէմն եղն.  
 « Իսկ չորրորդին՝ թէ մէկուն ձեռքն երկըն-  
 (նայ,  
 « Մեռնի Առիւծ, թէ նա տեղէս որջ գառ-  
 (նայ: ) —

## Է

## ԱՌԻԻԾ ԾԵՐԱՅԵԱԼ ԵՒ ԷՇ

Երբ գործը յաջող գըրպանդ է լեցուն,  
 Մարդկանց քով ունիս ստախլա յարգու-  
 (թիւն.

Իսկ երբոր ատոնք ստեղծուին քեղմէ՝  
 Լըսես ծանրը խօսք մեծէ պըղտիկէ:

Այս բանիս օրինակ  
 Համառօտ զայս առակ,  
 Առնելով հիներէն  
 Պատմեմ քեղ հայերէն: —

Աշխարհիս մէջը կայ բան  
 Որ չունենայ իւր վախճան.  
 Տըղայն կ'ըլայ օր մը ծեր,  
 Կը թառամին նոր ծաղկըներ:

Առիւծ թէպէտ զօրաւոր,  
 Ի կենդանիս թագաւոր,  
 Բայց և իրեն ծերութիւն  
 Հասաւ կենաց վերջերուն.

Ոյժ, զօրութիւնը հատած  
 Մընաց անտառը սառուկած :  
 Ամեն դաղանք, կենդանիք,  
 Հաղար և բիւր նախատինք  
 Թափեցին խեղճին գըլխուն,  
 Կէսն անիրաւ, կէսն ալ վուճ մուճ :  
 Ծերն՝ այն ամեն բաներուն  
 Կը համբերէր անտըրտունջ :  
 Բայց երբոր Էջն իշաբար  
 Յիշոյ ու կիցք անխընայ  
 Սկըսաւ Թափել իր վըրայ,  
 Մինչ վերջին շունչը տըրկար  
 Կ'աւուուր կու տար անդադար,  
 — « Համբերութիւնս, ասաց, հատաւ :  
 « Դու Արամազդ էս անիրաւ :  
 « Հասարակաց տըւիր մէկ մահ,  
 « Այս Էջս արաւ զիս կըրկնամահ : »

Ը

ԿԱՏՈՒՆ ԵՒ ՍՈՒՍԿ

Հանձար ու խելք մէկ ըստակ  
 Երբ բըռնութեան ընկնին տակ :

Կատուն ամառ ժամանակ  
 Յանտառն որսաց մէկ Սոխակ,  
 Ու ճանկերով մէջքէն բըռնած

— « Դու շատ անուշ, կ'երգես ասաց :

« Բանաստեղծներ քեզի, Սոխակ,  
 « Կու տան հաղար մէկ գովասանք :  
 « Քեզի համար՝ անցեալ օր  
 « Վարպետ-աղուէս կ'ասէր որ,  
 « Բողոր հովիւք հովուհիք  
 « Ձայնեդ կը դգան մարեղք :  
 « Ես ալ սըզտի երգիչ չեմ :  
 « Մէկ մ'ալ երգէ որ տեսնեմ,  
 « Թէ այս գովեստ, այս համբաւ :  
 « Սո՛ւտ են արդեօք, թէ իրաւ :  
 « Թէ ձայնդ ըլլայ անուշ, խաղուն,  
 « Կ'երգնում, խնայեմ քո արևուն : » —  
 — Բայց Սոխակին սաստիկ վախէն  
 Լեզուն կապուած էր արդէն : —  
 — « Երգէ հոգի, երգէ սիրուն : »  
 Նորէն կըրկնեց նենգժոտ կատուն : —  
 Իսկ անմեղ ձագն՝ երգել ո՛ւր տեղ,  
 Ճիկ մը հաղիւ հանեց մէկ հեղ :  
 — « Ի՞նչ, այս ձայնով, այ աներես,  
 « Բողոր անտառը մոգէ՞ր էս : —  
 Կանչեց դաղանն անըզամ : —  
 « Գիտցիր որ ձայնդ է անհամ,  
 « Եկ ո՛ւր մէկ մ'ալ համըգ տեսնամ » : —  
 Այս ասելով, ձագը պատուեց,  
 Եւ փետուրներն՝ հովուն ցըրուեց :



Թ

## ԳՍՅԼ ԵՒ ԱՂՈՒԻՍ

Արունատէր Գայլն ատենով,  
 Հարիւրը քիչ՝ հազարով,  
 Ոչխար ու այծ պատուէին վերջ,  
 Չամբընալով բաղմունթեան մէջ,  
 Եւեր այսպէս կը դանդաւտէր,  
 Թէ՛ « Շանց ձեռքէն Գայլերուն կեանք՝  
 Կեանք չէ, հապա անկերջ տանջանք :  
 « Ո՛րքան օրեր, ծարաւ քաղցած  
 « Անցուցեր էմ՝ եղկելիս :  
 « Արդարութիւն, օրէնք չըմնաց,  
 « Գիտուն, աըգէտ, ամենք զիս  
 « Անխիղճ սրբաով դատապարտեն :  
 « Ճարբս հատաւ, շիտակն ասեմ,  
 « Այլ այս կողմերս թողուլ փախչել,  
 « Միայն կարնայ զիս ազատել » : —  
 Գայլին յանդուգն խօսքերուն  
 Նեղացաւ սիրան Աղբւստուն . —  
 « Գայլ աղբար, ասաց, ո՛ւր պիտի երթաս  
 « Որ ուզածիդ պէս դատաստան դըննաս :  
 « Ո՛ւր ալ որ երթաս  
 « Այդ քու չար սըրբաով  
 « Այդ խածնող պատուող սուր ակուսնէ  
 (րով,  
 « Ամէն օրէնք՝ ւ արդար դատ  
 « Կ'անեն ըզքեզ դատապարտ » : —

Տէրը փոխելն անօգուտ է՝  
 Թէ չարն իր սիրաը չըփոխէ :

Ժ

## ՄԱՐԻ ԵՒ ԱՐՏՈՅՏ

Գեղեցիկաշուք հովտի մը մէջ,  
 Առքացեալ հասկերուն տակ,  
 Արտոյան համեստ գըդուէին վերջ  
 Կը խնամէր իր սիրոյն զաւակք : —  
 Կըռկըռացող Մարի-խաթուն  
 Օր մը փորին իւր պատճառաւ,  
 Եկաւ հովտին մէջը մըտաւ,  
 Եւ տեսնալով զմայրըն սիրուն  
 Որ՝ ի կըտուցն առած ճըճիք՝  
 Գարձեր կու գար դէպ ի բունիկ, —  
 « Երնե՛կ, ասաց, քեզ մարիկ,  
 « Հաղար երնե՛կ քեզ, Արտոյտ,  
 « Որ քու սիրոյդ արգասիք  
 « Կը տաքցընես մէջ ծոցոյդ,  
 « Եւ անխըռով հանգըստեամբ  
 « Կու տաս նոցա կեր ու ջամբ .  
 « Եւ քո ծընունդք սիրասուն  
 « Միւսէ հընձոց քաղուէրուն,  
 « Երգ երգելով քաղցրածայն  
 « Յերկինս պիտի վերանան :  
 « Այլ իմ՝ աւանջ սև արևուս,  
 « Տեղ մը չունիմ որ նըստիմ թուխս :

« Հաղիւն ըստիմ՝ ածեմ՝ հաւկիթ մէկ երկու,  
 « Կ'առնուն մարդիկ առանց վերաս խըղ-  
 (ճարու.)

« Պիտի չըլլայ ինձի այն օր

« Որ՝ վառեակներըս չօրս բոլոր

« Ժողված նըստիմ՝ ճըխալով,

« Քաշած ցաւերս մոռնալով: » —

— « Մի գանգատիր, եղաւ հերիք, »

« Ասաց նըմա, մայրն Արտուտիկ,

« Քու ցաւերուդ բուն պատճառ

« Դու ինքըդ ես, Մարի-խաթուն,

« Հաղիւ կ'ըզգաս օր ես մայր,

« Վերջ չըլլար քու կըռկըռներուն: —

« Ձայնըդ քաշէ, հաւկիթներուդ տեղ մը  
 (տես,

« Նըստէ թըխտէ, ինչպէս և երբ օր կ'ու-  
 (զէս.)

« Երկու ամիս ըման չեղած՝

« Դու ալ կ'ըլլաս մայր զաւկաց: » —

Մի սիրէք ձայն 'և արձագանք,  
 Ընտրեցէք ձեզ քաշուած կեանք.  
 Որով երկար՝ երջանիկ  
 Եւ աննախանձ ալ կ'ապրիք:

## ԺԱ

## ԳԵՂԱՅԻ ԵՒ ՕՁ

Գեղացի մը ձըմեռ ատեն՝

Տուն դառնալով իրիկուան դէմ

Իրեն գեղին մօտ անտառէն,

Ճամբուն վըրայ տեսաւ յանկարծ

Երկայն երկայն Օձ մը պառկած.

« Սառած է խեղճն, — ասաց մըտքէն, —

« Տանիմ ի տուն, ինչ կ'ըլլայ,

« Գուցէ նորէն ողջանայ: » —

Ժանդ վերագին ողորմեցաւ,

Պոչէն բըռնած առաւ տարաւ,

Եւ կըռկին քով ըզգոյշ գըրաւ:

Եւ ինքն անդէն հոգնած դադրած՝

Քիչ մը ես ալ հանգչիմ, ասաց:

Մնցաւ վըրան քիչ ժամանակ,

Օձն անիրաւ տաքնալուն պէս՝

Վերցուց գըրուխը նայեցաւ,

Ու Ֆըշալով օղակ օղակ,

Առ Գեղացին բարերար

Սողոսկեցաւ թըշնամբար:

Մարդն արթընցաւ, ինչ տեսնայ. —

Իր մահուանէ վըրկած գաղանն

Պիտի մատնէ զինքը մահուան՝

Եթէ քըչիկ մ'ալ ուշանայ:

Աճապարեց առաւ կացին

Ձախեց գըրուխ չար գաղանին:

Ո՛վ աստերախտ, խորատ քեզի  
Թող ջատկաբխած Օճըս լինի .  
Եթէ ասով չըզդասասացար  
Քու կորըստեանդ ինքդ էս պատճառ :

ԺԲ

Ծ Ղ Ր Ի Գ

Ծըզըիզըն խեղճ կանանց ճիւղի մ'վերև կրկգած  
Վայեր կու տար իր աննըչան վիճակին .

Մինչ թիթեռնիկըն գոյնըզդոյն հագուած սը-  
(գուած

Կը թըւզըտէր մէկ ծաղիկէն մէկալին :

— Ծաղիկներուն տեսքն իրարմէ գերազանց,  
Մէր թիթեռնիկըն նոր ծաղիկ մ'էր թե ա-  
(ուած : —

Ծըզըիզըն հառչեց . — « Անագորոյն գու Բըռնիկն ,

« Այդ էնչ սըրտով կամ էնչ արգեօք օրէնքով ,

« Ձիս այսպէս խեղճ ըստեղծելով

« Թիթեռնիկին արեւի այդչափ գեղեցիկու-  
(թիւն : ) —

Մինչդեռ այսպէս ցաւերու մէջ

Կը գանգատէր Ծըզըիզըն խեղճ ,

Խուճը մը տըղաք հոն եկան ,

Չեռքեր գընտակ գաւազան :

Մէկըն կը վազէ , միւսն ալ ետեւէն ,

Բըռնէն , կը թողուն , կ'իյնան ու կ'ենեն ,

Եւ ահա մէկը մէջերնէն  
— « Տըզաք , կանչեց , տըղաք , հասէք ,  
« Եկէք բըռնէնք սա թիթեռնիկ : » —  
Իսկոյն ամենքն այն տըղուն  
Մըտիկ արին խօսքերուն .  
Գաւազան , գընտակ ,  
Գըլեարկ , թաշկինակ ,  
Թափեցին թիթեռնիկին  
Անձըրկած անտէր գըլեին .  
Ողորմելին զուր կը ջանար  
Աղատութեան գըննելու ճար :  
Մէկիկ մէկիկ նաշխուն թեւերն  
Փեարուտեցին խա տըղաքներն .  
Գըլուին սոքեր մէկդի կըտարծ  
Սկըուն թիթեռն անկաւ մեռած : —  
Ծըզըիզը զայն որ տեսաւ՝  
Իր վիճակին փառք տըւաւ :


12/4  
39

Աշխարհիս փայլք պատիւ յարգանք  
Ունին իրենց մեծ մեծ փորձանք :

ԺԳ

ՆՇԳԱՐԻ ԵՒ ԼՈՒԲԻՍ

Երբ հասաւ գարնան զով,  
Նըրդարի ծառին քով  
Հողն ինքնին ճաթեցաւ՝  
Լուբիս մ'երեցաւ :



Հաղիւ աչքերը բանալով՝

Երբ տեսաւ ծառն ճիւղերով՝

Իսկոյն անոր պըլլուեցաւ:

Վըրան ամիս մ'անցաւ չունցաւ

Ծառին դադալմն ի վեր հասաւ: —

Այս ամենուն ալ է յայտնի

Որ մարդ բարձրէն դիւրաւ խաբուի: —

Լուբիան ալ ինք ղինք մեծ կարծեց՝

Եւ իրմէն վեր մեծ մեծ ջարդեց: —

« Բարեկամիկ ինչպէս ես՝

« Կը քընանաս, ինչ կ'անես », —

Կ'ասէր ծառին՝ ծաղրելով:

Բայց սա լուէր մեծ սըրտով: —

« Ես քանի որ հոս եմ

« Ըզքեղ մըշտ նոյն տեսնեմ:

« Եկուր աստ, քանի տարի

« Այդպէս կ'ապրիս վերայ երկրի »:

— « Կայ տասը տարի, » —

Ասաց Նըշդարի: —

« Հաղար ափսոս, կըրկնեց Լուբիան,

« Յաւիմ վերայ քու բաղրին.

« Նայէ, ես դեռ մէկ ամսրկան՝

« Կը մտենամ երկրնքին.

« Եւ այս հաշուով տաս տարիէն

« Բանի մ'անգամ երկինք պատեմ »: —

Ծառը տեսաւ որ Լուբիա՝

Բերնին եկածը դուրս կու տայ,

Եւ թէ՛ որքան ինք լուռ կենայ՝

Նա անդադար չափէն կ'ելնայ.

Խոժոռ աչքեր անոր դարձուց

Եւ այս խօսքերս ալ աւելցուց. —

« Երէկ մէկ, այսօր երկու

« Չես գիտեր վաղուան դալու.

« Կեցիր նայինք, դեռ դու ո՞վ ես

« Որ տաս տնորուան խօսք մէջ բերես:

« Ամառն անցնի, աշուն դայ,

« Տեսնենք ո՞վ կայ, ո՞վ չըկայ: » —

Իրաւ, ամառն որ անցաւ,

Լուբիային բանը պըրծաւ.

Գեղնեցաւ, սեւցաւ, չորցաւ

Ու քամին առաւ տարաւ:

Լուբիային վերջն՝ ըլլայ քեղի,

Ո՞վ պարծենկոտ, նոր հայելի.

Որ քիչ բանով մը ջըփացած՝

Ժամանակով դեռ փորձ չէղած,

Հին ծերերուն տընաղ չանես,

Թէ ոչ՝ վախճանդ ալ է այսպէս:

—

ԺԴ

## ԱՂՈՒԿՍ ԵՒ ԱՅԾ

Պարոն Աղուէան և Այծ աղբար

Մէկտեղ էլան ի ճանապարհ.

Աղուէսին ինչ վարպետորդի

Ըլլան՝ աշխարհք լաւ գիտէ.

Իսկ մէկալին ինչ ըղեղի

Տէր ըլլան՝ ո՞վ չըգիտէ:

Ճամբան երկար քալելէն

Տանըլուեցան ծարաւէն.

Երբոր ջըրհոր մը հասան,

Առանց չորս դին նայելու,  
 Մէկէն ի մէկ մէջ մըտան՝  
 Անուշ անուշ խըմելու:  
 Մէկ մ'որ աղէկ կըշտացան՝  
 Նոր սիրտ, նոր ուժ ըստացան.  
 Կարծես երկու օր ու գիշեր  
 Թէ ճամբանին դեռ երկարէր,  
 Ասոնք ջուրին նոր ուժով  
 Պիտ' երթային ապահով:  
 Բայց դու էկ տես ինչ արգելք  
 Կը խափանէ իրենց ելք:  
 Խոր ի դուբն են ջըրհորին,  
 Շատ վեր մընայ ճամբանին: —  
 Դարձաւ Աղբուհարն դէպ 'ի Այծ,

— « Որ բանը գեռ չէր հասկըցած.  
 — « Իմ բարեկամս, ասաց, ինչպէս  
 « Պիտի ելնանք այս ջըրհորէս.  
 « Միայն խմելով չի լըմընար.  
 « Պէտք է տեսնել մեր ճամբուն ճար: » —  
 Եւ քիչ մը լուռ կենալով,  
 Որպէս զի լաւ մ'Այծը խաբէ,  
 Վըրայ բերաւ խընտալով,  
 Իբրև թէ նոր գիւտ գըտեր է.  
 — « Միտքս աղէկ շընարք մ'եկաւ.  
 « Եթէ մըտիկ ինձ որ անես՝  
 « Բաներնիս խիստ յաջողի լաւ,  
 « Շուտով կ'եղնենք մենք ջըրհորէս:  
 « Սա առջևի ոտքերդ վերցուր  
 « Ու գէպ 'ի պատը կըռթընցուր.  
 « Դչուխըդ քիչ մ'առջև ծըռէ,  
 « Իսկ կոտոշներդ ի վեր աընկէ:  
 « Ես կըրնըկէդ ճանկըռթելով

« Կոտոշներուդ վըրայ կ'եղնեմ,  
 « Ու հանկէ մէկ վեր ցատքելով՝  
 « Մէկ մ'որ ինք զինքըս դուրս նետեմ,  
 « Ալ անկէ վերը կ'ըլլայ քու բանդ ա.  
 ( պահով,  
 « Քեզ վեր կ'առնում, ո՞ր և իցէ նոր կեր-  
 ( սով ): —

Բայց թէ ինչպէս. —  
 Զայն չասաց, Աղուէս:

« Ահա մօրուքըս քեզ վըկայ, »  
 Այժը պուսաց արմըննալով,  
 « Բուն խեղքի դանձն է քուկին քով,  
 « Ճարտարութեանըդ չափ չըկայ:  
 « Քեզի շիտակ խօսք մը զըուցեմ,  
 « Ճըշմարտութիւնն ինչմ'և ծածկեմ: —  
 « Թէ քեզի հեռ չըլլայի՝  
 « Անշուշտ ես հօս մընայի: » —

Ինչ և իցէ շատ չըբըշէց  
 Աղուէսն հորէն զինք դուրս նետեց:  
 Այլ տես թէ ինչ անդուծ սըրտով՝  
 Մահու բերան զԱյծը թողլով,  
 Կըծու կըծու խօսքեր զըուցեց,  
 Ու իր ճամբան առաւ քաշեց: —  
 « Երկինք, ասաց, թէ քեզի  
 « Փոխան բըրդեղ կըզակի՝  
 « Կըտոր մը խեղք տուած ըլլար՝  
 « Իսկոյն չէիր հոտ իջնար:  
 « Յուսանք՝ ասով խեղք կը սորվիս,  
 « Միայն թէ ողջ հօրէն պըրծիս: » —

Առակս ըլլայ օղ ակընջիդ,  
 Զըրած ըզվերը՝ մտածէ գործիդ:

## ԺԵ

## ՀԱԻ, ԱՂՈՒԷՍ ԵՒ ՈՐՍՈՐԴ

Մինչդեռ անհող Հաւըն հունդեր կը քաղէր,  
Եւ իր կրօնէն անդին բան չէր մըտածեր.

Յանկարծակի կայծակի նման

Աղուէսն հասաւ խեղճին վըրան.

Խածաւ կոխեց բըռնաբար

Ըղճաւն անմեղ և անձար,

Որ ճըւտլով ճըւճըւալով

Սնորք թուէրը թափելով

Ողորմագին կանչէր լալով: —

Հաւին տեղ ո՞վ ալ ըլլար,

Ճըւտլէն զատ ի՞նչ կարնար,

Թէ որ Որսորդը վրայ չըգար: —

Սա հրացանը լըցած՝

Քաշեց պարպեց շիփ շիտակ՝

Չարագործին թաւ կըռնակ,

Մահագուշակ ճիշդ հարուած.

Հաւին ալ թաւ կախ մընաց,

Որով երկուքն ի միասին

Յանկարծ մահուան դուռը հասին.

— « Ա՛յ անօրէն, կանչեց Աղուէս,

« Ի՞նչ պատճառաւ է որ այսպէս

« Կը մեռնիմ էս չարացար: —

— « Ա՛յո՛ », ասաց, Հաւն հեղաբար,

Եւ ոյժ տըւաւ իր ողջ թաւին

Որ չըլլայ զո՛հ անոր բերնին.

— « Ի՞նչ, կ'ուզէիր որ լուռ կենամ,

« Եւ շնորհակա՛ն ալ քեզ ըլլամ՝

« Ընկած քու սուր ահուայից տակ: » —

Սակայն Որսորդն հասաւ շուտով՝

Նոցա վիճին վախճան տալով.

Հաւէն շինեց խորոված,

Մորթ Աղուէսուն կարեց գըտակ,

Մխար ձըգեց շանց դիմաց:

Միշտ բըռնաւոր անխըղճին դէմ՝

Սնորք տըկաբքն յանցաւոր էն.

Բըռնագոյն ձեռք մը պիտի

Որ զերկուքնին ալ դատի:

## ԺԶ

## ՄՍՏՂԱՇ ԾՍՈՒՐ

Սնտառի մ' մէջ ծառ մը կար՝

Երկայն, բարակ ու տրկար.

Սա օր մը մարդ տեսնելով,

Մէջը սըրած կացինով.

— « Արմ, ասաց, ինձ մըտիկ՝

« Բաներ ունիմ ասելիք.

« Հոգիդ սիրես՝ շնորհք մ' ըրէ

« Եւ սա չորս կողմնս մաքրէ.

« Կըտրէ, վերցուր այդ ծառեր,

« Որ կը նեղէն իմ՝ ճղեր.

« Թող որ անգամ մ' արև տեսնեմ,

« Կապոյտ երկինքը վայելեմ:

« Տարին անցնի թէ՛ զիս տեսնաս  
 « Հովտիս բոլորը չբոխրած ,  
 « Այն ատեն զսրի զիս՝ կոտրե  
 « Ու տար ի կրակը ձրդէ : » —

Մարդը մըտիկ արաւ Մառն  
 Ինչպէս իր հին բարեկամին .  
 Քաշեց մէջքի կացինն հանեց՝  
 Քովն ծառերն ամեն ջարդեց :

Երբ մինակուի Մառը մընաց՝  
 Խեղքը կարծես գըլխէն գընաց .

— « Բանէ մ'ասաց , փոյթըս չէ ,  
 « Աշխարհիս կեանք , ալ իմն է : » —

Ուժին արեւու որչափ կըրցաւ ,  
 Լաւ մը չորս գին տարածուեցաւ .  
 Անցնող դարձող՝ երբ զինք տեսնար՝

— « Ազնիւ \* , կ'ասէր , ահա՛ քեզ ծառ : » —  
 Տեսակ տեսակ թըռչուններ

Եկան գըրին հոն բուններ :

Անուշ հովիկն ալ այս ծառին .

Կարծես զմայլած էր տեսքին : —

Բայց եկու տես թէ՛ կնչ դիպուած՝

Դեռ այն տարին չբոլորած ,

Լաւ ճըշմարտեց այն հին առած ,

Թէ — « Խընտուովն յաջորդէ լաց : » —

Աշնան օդեր փոփոխական՝

Մէկ ժամ միւսայն չէ նըման : —

Օր մ'արեւ ծագէր պայծառ ,

Փոթորիկ նըշան չըկար .

Մէկ մ'ալ յանկարծ

Ամպը գոռաց ,

\* Տճ. Ափերիմ :

Կայծակ ցոլաց ,  
 Հովը պոռթբաց .

Չարկաւ Մառն այնպէս ուժով ,  
 Որ վեր խըլեց հողով մողով :  
 Մառն ընկնելով ի դետին՝  
 Հառաչեց այս խօսք յետին .

— « Հովը մըտքէս անցած չէր ,  
 Կորսըւեցայ անընկեր : » —

ԺԷ

ԱՌԻԻԾ, ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Մեծամեծաց հետ մի սիրեր  
 Նըստել էնեւ, ըլլաւ ընկեր .

Ապա թէ ոչ կը պատժիս ,

Ինչպէս որ Գայլն առակիս .

Կամ պէտք կ'ըլլայ շողըբորթես՝

Ի ֆրաս անձիդ՝ Աղուեսին պէս :

Օր մը Առիւծ , Գայլ ու Աղուէս

Ընկերացան իրարու .

Արին . — « Ապրինք աղբօր պէս ,

« Ինչ որ կարնանք որսալու՝

« Անեք մէջերս հաւսար բաժին : »

Խօսքին վըրայ դեր ալ արին ,

Եւ անուննին ստորագրեցին :

Վերան անցաւ, մէկ կամ շատ շատ երկու օր,  
Աղուէն որսաց Եղնիկ մը գէր ու գըրըր:

Շուտով ընկերք հօն հասան.  
Եւ կենդանեաց Թագաւոր  
Բարձրը ձայնով ասաց որ՝  
Որսը գըրուի ի մայտան.  
Եւ իրենցմէ ո՛վ որ ուղէ  
Ձայն երէք մասըն Թող բաժնէ:  
Բերնին ջուրերը սըրբելով՝  
Քոստքոստ եկաւ Գայլն որսին քով:

— « Առաջին մասն, հանդերձ գըրխով, տէր

(արքայ,

« Ասաց, ձեզի տալ ինձ պատշաճ կ'երեւայ .

« Փորը, մորթին և աղբքներ

« Թէ ինձի տաք՝ գէշ չէք աներ .

« Իսկ մընացածն, Աղուէս աղբար,

« Քեզի կ'իյնայ բաժին արդար... »

Դեռ խօսքին կէսն էր ի բերան,

« Ա՛յ անխելք Գայլ » սրուաց Առիւծ,

Խեղճին ծոծրակին ապտակ մը հասուց,

Որով աչքերն 'ի դուրս եկան .

Ինք դառնալով դէպ 'ի Աղուէս,

— « Բաժնէ, ասաց, դու՛ պէտքին պէս : »

Աղուէսն ահով ու դողով

Խեղճ Գայլուն քով մտտենալով,

— « Երէք բաժինն ալ, տէր արքայ,

« Ձեր բարձրութեան, ասաց, կ'իյնայ .

« Գըրուին ու կուրծք նախաճաշիկ),

« Կէս օրին ճաշ՝ ձեզ փորտովք,

« Իսկ մընացածն, արէք ընթրիք : » —

Առիւծն ասաց ժրպտելով.

— « Լաւ բաժանմունք, շատ խելքով .

« Բայց՝ ասա՛ Աղուէս, ուսկից սորվեցար

« Այսպէս դորձ տեսնէ տեղով ու յարմար : »

— « Ճըլմարխան ասեմ՝ ձեզի, տէր արքայ,

« Գայլուն դուրս ընկած աչքէն սորվե-

ցայ : » —

ԺԸ

ՊՈՉՍՏ ԱՂՈՒԻՄ

Աղուէս մը կար չընէ փախած վարպետորդի,

Սեճ հաւակեր, մեճ ջարդ տըւող նապաստակի :

Սա օր մ'ընկաւ գեղջկին ծուղակ,

Բայց ինչ արաւ, ինչ չարաւ,

Ծակ մը գըտաւ դուրս պըրձաւ .

Ետեը բաց խողք խայտառակ,

Ձի հոն ձըդեց պոչը գըրաւ :

Բայց իր պակասը պարտընէլու

Օր մ'աղուխուց ժողովքին մէջ

Ըսկըտաւ ճառ մը խօսելու,

Թէ՛ « Պոչ ասածդ՝ անշահ, փըլցին

« Չարդ մ'է կախուած դառ առանձին .

« Միշտ կ'աղտտի կը ցետտաի,

« Պէտք է կըտրի ու վերցըլի : » —

Այս խօսքին դէմբշաւ մեկէն

Ունկընդրաց մէկը խընտալէն .

— « Խօսքըդ մեղրով, բարեկամ,

« Ասաց, դարձուր էտեըդ մէկ մը յատեան,

« Ձի տեսնելով կըտրենք ըստոյդ դատաստան : »



Աղուէսք զայս լսելով՝  
 Մեծ մեծ ծիծաղով  
 Խընտալ ըսկըսան  
 Պոչատին վըրան :  
 Եւ նոյն հին կերպով  
 Պոչաւորք պոչով,  
 Պոչաւան ամօթով՝  
 Տեղերնին դարձան :

ԺԹ

ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՆԵՐ

Ճոխ ու հարուստ աղայի տուն  
 Կատու մը կար տեսք սիրուն .  
 Մարմնով գիբուկ գունդուլիկ ,  
 Մորթը փափուկ խատուտիկ :  
 Կ'ուտէր զէրտէ փախլաւա ,  
 Պառկէր կակղիկ բարձի վրայ : —  
 Կատուն , կ'ասեն , իրեն փորին  
 Մատաղ կ'անէ մըկան հոգին : —  
 Սա՛ փորը կուշտ , կըռնակը տաք ,  
 Որսի չունէր Ժամանակ .  
 Որով համարձակ մըկներն անըզամ՝  
 Կը վըխտային տան մէջ ցորեկն անգամ .  
 Թէ առաւօտ , թէ իրիկուն ,  
 Թէ գիշերուան ի խոր մըթուն ,  
 Բան մ'առնելու Ժամանակ՝  
 Միշտ կու գային ձեռքի տակ ,

Թէ չէր մունկ՝ էր մըկան ձագ :  
 Բայց ի՞նչ կարծես . պարոն Մըկներ  
 Չեն այսչափին ալ գոհ եղեր :  
 Օր մը յատեան կը Ժողվին ,  
 Եւ մէջերնէն լեզուանին ,  
 Իբրև նոր ոմըն Դեմոսթեն ,  
 Ի ծակ մըկանց և ոչ յԱթեն ,  
 — « Արիացիք , կ'ասէ , Մըկներ ,  
 « Աղատութեան Ժամն է հասեր .  
 « Բըռնաւորին լուծը թոթվէնք ,  
 « Թէ պէտք ըլլայ մեռնինք ալ մենք ,  
 « Թող մեր սերունդքըն սիրատուն  
 « Վայելէն քաղցր ազատութիւն .  
 « Մեռնի Կատուն : » —  
 — « Մեռնի , » կըրկնեն քաջ քաջ Մըկ-  
 ( ներ ,  
 Եւ հո՛ւս վաղէն ամենքն ի վեր ,  
 Մէկն 'ի մառանէն ,  
 Մէկն 'ի դարանէն ,  
 Կը թափին խեղճ՝ Կատունն գըլխուն  
 Որ՝ կըծկըտած էր յանոյշ քուն :  
 Ոմանք ոտքերը քաշկըտան ,  
 Ոմանք զականջքըն խածխըծեն ,  
 Ոմանք երկար պոչին ծայրէն :  
 Յատքէ Կատուն մըռմըռալէն  
 Երբ կը տեսնէ որ վատ Մըկներ  
 Իրենց չափէն դուրս են էլեր ,  
 Մէկ զի գըրած ըղբունն անոյշ  
 Կ'առնու խաթունն հըսկայի ոյժ .  
 Չարք մը կու տայ մեր քաջերուն  
 Որ սատակով կը լեցուի տուն :  
 Հազիւ երկու Մըկուկը միայն՝

Ծակէ մը ներս սլործիլ կարնան ,  
Եւ մէկմէկու կ'ասէն ճամբան . —  
« Թէ որ չափերըս դիտնայինք  
« Այս փորձանքին մէնք չըդայինք : » —

## Ի

### ԱԳՌԱԻ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Թէ նենդաւոր խօսքերով  
Անըզգամին չըփացար ,  
Կը պատժուիս խիստ շուտով՝  
Բայց վերջի լացն է անճար :

Պանիր ի կտուց Ադուաւըն սե  
Դագարեր էր ծառի մ'վերև .  
Վարէն Աղուէսը տեսաւ  
Բերնին ջրեր վաղեցաւ . —  
« Ադուաւ , ասաց , այդ ի՛նչ փայլուն  
« Տեսօք Թըռնիկ ես եղեր դուն .  
« Ջրուցէ խնդրեմ ուստի բուսար ,  
« Ձի չըկայ քեզ յերկրիս հասար .  
« Երգդ ալ անշուշտ տեսքիդ սէս  
« Քաղցր է ու անոյշ կարծեմէս : » —  
Այս խօսքերով ուսած Ադուաւ ,  
Կըտուցքը լայն մը բաց արաւ .  
Եւ անախորժ կըսկընէր  
Պանրին հետ վար կ'արձըկէր .  
Խեղճը առաջ և ոչ կարծէր

Որ մեղեդի պիտի կանչէր :  
Համեղ պատառն անդիէն  
Նենդժոտ Աղուէսն ուտելով ,  
— « Ո՛հ , ասաց , սա շատ համով ,  
« Վար չի մընար շաքարէն :  
« Բայց դու , ջատուկ Ադուաւ , դագրէ ,  
« Չայնդ ալ տեսքէդ շատ հեռու չէ :  
« Եթէ կ'ուզես սանրիդ փոխան՝  
« Թող այս խօսքերս միտքըդ մընան . —

« Ըզքեզ գովող շողոքորթին՝ ասկէ վերջ  
« Փոխան բերնին՝ Զանա՛նայիւ սըրտին մէջ : » —

## ԻԱ

### ՀԵՂԵՂ ԵՒ ՎՏԱԿ

Որոտաձայն ծընունդ ամուց  
Հեղեղն՝ երթար Թափել ի ծով  
Դըդըչալով , մըմըուալով  
Գերած գերփած աւայն ի ծոց :  
Ճամբուն վըրայ հանդիպելով  
Վըճիտ պայծառ Վըտակին ,  
Որ լեռներէն իջնալով  
Կը կարկաջէր ի հովտին ,  
Ասաց . — « Ո՛վ խեղճ , այդ ի՛նչ քիչ ջուր ,  
« Ողորմելէ՛ք բողբ արխուր .  
« Տէս ինձ , ես դեռ երէկ ծընայ ,

« Այսօր ահեղ ծով մը դարձայ : » —  
 — « Վաղն ալ, ասաց, հեղ Վըտակ ,  
 « Յամբի չորնայ քու յատակ .  
 « Ձե քեղն պէսներ  
 « Ես շատ եմ տեսեր : » —  
 Յիրաւի միւս օր  
 Քեղացիք բոլոր  
 Անթաց ոտքերով ,  
 Մնցան քալելով ,  
 Յամբած Հեղեղէն  
 Մէկմէկու քովէն :

ԻԲ

ԵՂՆԻԿԻՆ ԵՂՁԻԻՐԻՆԵՐ

Ղուքու օգուտ ո՞ր անգամ  
 Կարցար ճաննալ, բարեկամ .  
 Ձէ՞ որ շատ հեղ կը զուրցես ,  
 — « Այս առթիս մէջ, գիտեմէս ,  
 « Իմ շահըս լաւ սորվեցայ ,  
 « Թէ և առաջ խաբուեցայ : » —  
 Բայց անցածն ալ անցաւ  
 Ասկէ ետև գիտէ լաւ :

Անտառին մէջ ինքնիշխան  
 Վէր վար վաղող Եղնիկ աղան ,  
 Մարաւէն օր մ'ըստիպուած՝

Ձուր խրմելու աղբիւր իջաւ :  
 Եւ հօն յանկարծ առջնն ելաւ ,  
 Պայծառ ջրբն մէջ տրպուած ,  
 Եղջիւրներուն վրսեմ պատկեր :  
 Մինչդեռ անոր ըզմայլած  
 Կուշտ կուշտ է ջուր կը նայէր ,  
 Բարակ բարակ ու չորցած  
 Տեսաւ վարով իր ոտքեր .  
 Ու սիրաբ կոտորած  
 Հասչեց ու ասաց .

— « Ի՞նչ էս արեր , Տէր Աստուած ,  
 « Եղջիւրներուս արևող գուն ,  
 « Որոց վրսեմ գեղեցկուձիւն  
 « Կը զարդարէ իմ ճակատ .  
 « Մի՞ թէ այս իմ խեղճ ու անբաղդ .  
 « Ոտքեր ալ քո՞ են ստեղծուած : » —  
 Ահա նոյն ատեն ,  
 Մառոց ետևէն  
 Ձորս ոտք վաղէլէն  
 Յարձրկեցան  
 Խեղճին վըրան

Որսորդ շններն հաւըլտալով :  
 Յատքեց Եղնիկն բարակ ոտքով ,  
 Որոց վըրայ գեռ կ'ափսոսար ,  
 Եւ շներէն փախաւ ճորով .  
 Բայց հազար մեղք . Ի՞նչ կ'ըլլար  
 Որ եղջիւրքն ալ ոտքերուն հետ է միասին  
 Եղնիկին կեանքն ազատելու աշխատէին :  
 Յատքեց Եղնիկ , փնային շներըն հեռու ,  
 Բայց գըլտուն զարդք չըթողին շատ վաղէ .

Եղջիւրք ծառոց մէջ փաթթըւած  
 2\*

Մընաց Եղնիկըն գուժարած՝  
 Շըներուն սուր ահապին տակ .  
 Եւ մեռնելու նեղ ժամանակ  
 Շատ անիծեց իւր մահատիժ եղջիւր .  
 (նէր .  
 Բայց ախոս, որ աչ ժամանակն ան .  
 (ցեր էր :

## ԻԳ

### ԳՍՅԼ ԱՅԾ ԵՒ ՈՒԼ

Այժըն մայրիկ գիշերը կաթ  
 Տալով Ուշին առատ առատ,  
 Հարկ եղաւ որ առաւօտ  
 Կանուխ ելնէ երթայ յարօտ :  
 Եւ իր Ուշին յըզգուշութիւն՝  
 Մինչև իրեն տուն դառնալուն,  
 Այս մէկ պատուէրը տըւաւ .

- « Իմետե՛ս դըրան երկաթը գընես ,  
 « Ո՛վ կ'ուզէ գայ , նայէ լաւ ,  
 « Առանց Գայլիոփ բառն ի նըշան լըսելու՝  
 « Չըլլայ որ մէկը նէրս առնես : » —  
 Այս ասելով էլաւ գընաց :  
 Խօսքը լըսեց Գայլն ու խնաց .  
 Գուռը զարկաւ և այծենի կեղծ ձայնով  
 — « Գայլիոփ , Գայլիոփ , բաց , ասաց , գուռը  
 (չուտով : » —

Սակայն Ուշիկըն կասկածով,  
 Դըրան ծակէն դէպ 'ի գաղանն ,  
 Ասաց , — « Մարիկ , կ'ուզէ՞ս բանամ ,  
 « Ճերմակ թաթով , տուր ինձ նըշան : » —  
 Եթէ Ուշիկն հաւատար  
 Կեղծուպատիր Գայլուն խօսքին ,  
 Անշուշտ կ'ըլլար կեր գաղանին :  
 Գայլն արմընցած նայեցաւ վար ,  
 Երբէք չի տար Բընութիւն ,  
 Ճերմակ թաթիկ գայլերուն :  
 Ուստի գըլուխը վար կախած՝  
 Եկած ճամբէն դարձաւ գընաց .  
 Յիշոցք տալով լիրբ անըզգամ՝  
 Չոր չի վայլեր յիշէլ անգամ :

Ամեն խօսքի գու մի խեղցի հաւատար ,  
 Երբէմն ուղէ գու պատճառին ալ պատճառ :

## ԻԴ

### ՄՆԱՊԱՐԾ ԶՈՐԻՆ

Երբ գըլընուս փորձանք մը գայ  
 Այն ժամանակն է որ ահա  
 Մեր չափը լաւ կը հասկընանք ,  
 Կը խոնարհինք ու գոհ կ'ըլլանք :

Հըսարտ Զորին կը պարծենար  
 Իրեն նախնեաց աղըւու թեամբ :

« Իմ մօրըս պէս, կ'ասէր, չըկար  
 « Ո՛չ ուժով՝ ո՛չ գեղեցկու[թեամբ]»  
 « Նա չէր վազէր, այլ կը [թռուչէր»  
 « Տասնէն աւել ի ձիւն[թաց  
 « Յաղ[թեց, առաւ նա ոսկի [թաս»  
 « Եւ իր տերանց ըստացողաց  
 « Վաստըկցուց մեծ մեծ գըրաւնէր»  
 « Նա իրեն կենդանու[թեան՝  
 « Աշխարհքի մէջ էր յիշուական»  
 « Իսկ էս նայէ ի՛նչ աննըշան  
 « Կեանք կ'անցընեմ մօրս անարժան»  
 « Սա Տէրտիրոջ գուռը այսպէս  
 « Մինչև երբ քաշ պիտի դամէս» —

Բայց ոչ, երկար չըմննաց  
 Ի Տէրտիրոջ գուռը նա»  
 Բաղդը դարձաւ յեղակարծ՝  
 Իշաղացքին եղաւ ծառայ»  
 Այն Ժամանակ յիշէց Չորին,  
 Որ իրեն հայրն ալ ջաղցպանին  
 Աշխատաւոր ցած իշուկն էր,  
 Որ միշտ տատասկ ու ծեծ կ'ուտէր»

ԻԵ

ՆԱՊԱՍՏԱԿԻ

Մեղմէ խեղձին նայելով  
 Կարնանք սպրիլ գոհ սըրտով»

Նապաստակներն օր մը ժողլած՝  
 Խորհուրդ արին, տըրտում տըխուր»  
 Խորհուրդ՝ ցաւօք լի և անլուր»  
 Զի սըրտերնին էր շատ էրած» —  
 « Զունինք, ասաց, մէկն ի նոցուն,  
 « Ո՛չ մէկ կողմէ պաշտպանու[թիւն՝  
 « Մարդիկ, շընէր, ամեն գաղան,  
 « Մէր մեռնելուն կը ցանկանան»  
 — « Երկինքն, ասաց, ծէր մը խըռֆած,  
 « Երկինքն՝ անդու[թ է, ասեմբաց»  
 « Մէր [թընամիք, շատ զօրաւոր,  
 « Անոնց դէմ հով էնք, փուճ անդօր»  
 — « Երկինք, կըրկնէց երրորդ մ'իսկոյն,  
 « Թէ չի խնայեր մեզ խեղձերուն,  
 « Ինչո՞ւ ուրեմն ալ սպրիլնք» —  
 — « Լաւ է մեռնինք կորսըւինք»  
 Ասաց առաջին  
 Մակարդը չարին»  
 « Երթանք սա մօտ լիճը [թափուկնք խըղցը-  
 (ւինք,  
 « Այսքան երկար չարչարանքէ աղատինք» —  
 Ինքն առջևէն պարագլուխ,

Ետեհն այլք կախգրըւելս,  
 Կ'երթային լուռ ու մուռ  
 Խըղըւել գէս ի ջուր: —  
 Սոցա գալուսան ըզգալնուն պէս,  
 Ողորմելի գորոք, ինչ տեսնես,  
 Ամեն կողմէ լեղասլաատու  
 Ընկան ի ջուրըն շնչաստաւ:  
 Զայն տեսնելով մէկ խելացի Նասրաս

(տակ,

— « Աղբարք, կանչեց, նորէն մեր տեղը դառու  
 (նանք.

« Ահա մեղմէ վախկոտ խեղճեր ալ տեսանք: » —

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ

Ա

### ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՌԱՍՊԵԼ

Ճըմարտութիւն բոլորովն մերկանդամ՝  
 Երկնից յըստակ դաւառէն,  
 Եկաւ իջաւ երկրիս վրան.  
 Բայց գոհ չեղաւ իւր բաղդէն:  
 Զի տեսնելով զինքն անհագուստ,  
 Ծերք, սառաւունք և մանկամարդք,  
 Եւ ամօթխած սարկեշտ կուսանք  
 Աւին փախուստ:  
 Երկնաբընակ ճըմարտութիւն  
 Մընաց ձիւնին ներքեւ անտուն:  
 Յանկարծ ելաւ անոր գիմաց  
 Առասպելն հաղուած զքուած.  
 Փետրօք գրըւելը զարգարած,  
 Վիզը մարգրիտ սըսսըզուն,  
 Կուրծքին՝ ահուհը վառվըռուն,  
 Թէպէտ չուէր ըստոյդ գոհար՝  
 Բայց խաբելու չափ փայլ կու տար.

Հասակն ի վայր երկայն մուշտակ  
Կը տաքցընէր նորա կըռնակ .

Շուրջքը սամոյր պատուական ,  
Մէջը կատու անպիտան :

— « Բարով, ասաց, Ճըշմարտութեան ,

« Ի՞նչ էս կեցեր ճամբուս բերան : » —

Ճըշմարտութիւնը մեղմ ձայնով  
Նորա բարնն ընդունելով ,

« Տեսնես, ասաց, սիրելի ,

« Յուրտէն մարմինս կը սառի .

« Ի դուր խընդրեմ անցորդներուն ,

« Որ զիս տանին իրենց տաք տուն .

« Սմէնք ինձէ կը փախչին ,

« Վայ՛ ճըշմարիտ ասողին : » —

— « Քոքոյրդ եմ էս, կըրկնեց անոր Առասպել ,

« Սահայն ամեն տուն կը մըտնեմ անարգել .

« Ինչո՞ւ տանջուիս ի դուր տեղ ,

« Պէտք է ատոր գրանել դեղ . . . .

« Գեղ՛ որով ամեն տուն ,

« Սնարգել էս ու դուն ,

« Մըտնենք էլնանք ,

« Երբ կամենանք :

« Արի , ծածկէ իմ սամուրիս մէկ ծայրով

« Քու անգամայրդ մերկուութիւն .

« Գըլխուս քանի մ'փետուրներով

« Յարմարցուր զարգ մ'ալ քու գըլխուն :

« Քու պատճառաւք իմաստնոց քով

« Ձեմ մընար էս ալ ամօթով :

« Իսկ յիմարններն ըզբեղ ինձ հետ տեսնելով

« Մեղ կ'ընդունին ովլաննայով .

« Որով երկուքս հաւասար

« Գործ կը տեսնենք օգտակար : » —

Բ

ԿԱՊԿԻՆ ՄՈԳԱԿԱՆ ԼԱՊՏԵՐԸ

Ձեզի կ'ասեմ, մատենագիրք , հեղինակք ,

Որ միշտ վըսեմ ու բարձր ոճով

Իբր ամպերէն որոտալով

Կը գըրէք Երգ ու Արձակ .

— Թէ հասկըցող ալ չըլլայ ձեր գըրածին ,—

Խընդրեմ, դըրէք ուշ առակիս իմաստին :

Մարդուն մէկն ունէր

Մոգական լապտեր .

Անկէ ալ զատ իրեն տուն

Կապիկ մը կար վառվըռուն .

Ձոր տեսնելու կու գային

Ժողովըրդոց բազմութիւն :

Ապուղնիկ էր Կապիկն անուն ,

Ինք լարախաղ շատ ուստուսուս .

Կը ցատքըտէր , յոտն ի մատին կը խա-

( զար ,

Յանկարծ մեռեալ լարին վըրայ կ'եր-

( կըննար :

Օր մը սորա տէրը գընաց գինետուն . —

Անշուշտ այն օրը տօն մը կար ,

Թէ ինչ սուրբի՛ միտքըս չի գար : —

Անտէր տան մէջ մընաց Կապիկն իր գըլ-

( խուն ,

Այլ սահայն ոչ անհոգ, անգործ ու գա-

( տարկ .

Ձի այդ բան՝ էր նորա բնութեան հակա-  
(ուսի:

Ուստի ժողովեց տիրոջը տունն

Դուռ գրբացի մեծ բազմութիւն.

Շուն, կատու, խոզ, հաւ, հընդհահաւ,

Կարճը՝ զրուցեմ, ով որ գըլասաւ:

— « Մըտէք, մըտէք, կը կանչէր մեր Ապուղնիկ,

« Չարմանալի նոր տեսարան

« Պիտի բանամես ձեր զիմաց,

« Ո՛րչափ ուզէք ձըրի անվարձ զուարճացիք.

« Ներս մըսնեղու փող տալ հարկաւոր չէ:

« Սրածըս բոլոր ձեղի պատիւ է: » —

Հանդիսականք ամենեքեան՝

Իրենց տեղերը բաղմեցան:

Մէջ տեղ բերուեցաւ Մոդական Լասլ-

(տերն,

Աճապարելով փակեցին փեղկերն:

Ու բերնին տալով չըղէփ \* Ապուղնան,

Շատ գովեստ զրուցեց Լասպերին վը-

(բան:

Խօսք չըկար մեր ճարտար Կապկին արու-

(եստին,

Միայն լըսողը յօրանջէլով ծամի զարկին:

Անով Կապիկը գոհ եղած՝

Առաջ անցաւ սօթուրած՝

Առաւ ներկուն ապակին,

Եւ յարմարցուց Լասպերին. —

« Տեսած ունի՞ք ասոր նըման՝

« Չարմանալի նոր տեսարան, »

\* Շատախօս:

Գարձաւ կանչեց նա մեծ աճայն.

— « Նայեցէք, բարեկամք,

« Ահա ձեզ արեգակ,

« Ճառագայթներն արձըկած,

« Լուսապայծառ գեղապանծ:

« Ահաւասիկ ձեզ և լուսին

« Սրծաթափայլ բողբոլին:

« Սոցա ետևէն Արամն ու Եւան

« Չորս զին կենդանիք և հաւք զանազան.

« Այս է ստեղծումն աշխարհի »: —

Հանդիսականք ամենայն,

Թալուած ի խոր գիշերի,

Թաթերուն վըրայ ելած

Աչքերնին մեծ մեծ բացած,

Լսածնին տեսնել կ'ուզէին.

Բայց էր խաւար ամեն զին:

— « Հաւատացէք, կանչեց Կատուն անհամբեր,

— « Կամ իմ աչքերս բողբոլին են կուրցեր,

Կամ Կապիկդ այդ ջընորած

Դուրս կու տայ բերնին եկած: » —

Շունն նեղացած՝

— « Ըսկիզբէն վեր ես ալ, ասաց,

« Ամենեկն բան չեմ տեսած: »: —

Իսկ հընդհահաւան, այսպէս կ'ասեր.

— « Շիտակը՝ ես տեսալ մ'բաներ

« Կը տեսնամ էր.

Բայց ե՛կ նայէ որ այդ բաները մէկմէկէ

« Չանաղաներն դըժուար է: » —

Իսկ Կիկերոնն անդադար

Կը ճառատէր ճոխաբար.

Մինչդեռ իւր իսկ պակասութիւն՝

Պատճառ էր բան չերեւալուն.



Թէ հարցընես . — « Արդեօք ի՞նչ էր . » —  
Լապտերին մէջ լըյս վառած չէր :

Գ

Ծ Ա Ղ Կ Ո Ւ Ն Յ Թ

Մէկ սարտիղի մը մէջ ծաղկուէք զանազան  
Կը ծաղկէին հոտով տեսքով անըրման .  
Ոմանք ծառոց փաթթըւելով կ'էնէին ,  
Ինչպէս բաղէին ու պտտատուկ .  
Եւ այլք ցածուկ կը բացուէին ի դետնին ,  
Ինչպէս վէռվէնն ու հըրանուէն :  
Հօն դըտնըւէր ամեն տեսակ ,  
Բարդ բարդ մեխակ , կարմիր՝ ճերմակ .  
Իսկ շուշաններ՝ վայրի՝ ջրեր՝ և հովտոց  
Կը բացուէին ամեն օր նոր ի նորանց :  
Աղբերաց-արիւնըն Հայաստանեայց՝  
Հօն տեղ կը փայլէր ի բոսոր հագուած :  
Բուրաստանին մէկ շուք տեղ՝  
Կ'ապրէր քաշուած և Մանուշակն աչագեղ :  
Օր մի օրանց առտըւանց ,  
Գըլուխն ի վեր , շիփ-չիտակ ,  
Կայնած Շուշանն ըսպիտակ՝  
Յոխորտաբար՝ Մանուշակին զայս ասաց .  
— « Բա՛ Մանուշակ , ո՞ւր մըտեր էս .  
« Հոտըդ կ'առնում , դուն չըկաս ,  
« Ափսոս չէ՞ քեզ . դուն մեղք չէս ,  
« Այդպէս ինչո՞ւ խեղճ մընաս ... »

« Թէպէտ հասակդ է փոքրիկ ,  
« Այլ աչերդ են խորոտիկ .  
« Դու մէկէ մ'ալ ամբընալու բան չունիս ,  
« Կարճ հասակէդ քաշուել պէտք չէ քեզ , հու  
( գիտ : » —

Այն Շուշանին սընասպարծ՝  
Յոխորտանքին փոխադարձ՝  
Մեր Մանուշակն հեղ ու խոնարհ  
Դարձաւ ասաց հանդարտաբար .

— « Աղին սըրտիդ , պերճ Շուշան ,  
« Ծնորհակալ եմ բիւր անգամ .  
« Այլ կը խըդդեմ , ինձ համար  
« Դու մի մաշուիր ու հողար .  
« Իմ վիճակէս էս գոհ եմ .  
« Այս տերեւոց շուքին տակ՝  
« Աղաս կ'ապրիմ հովէն մըրբէն : » —  
Այսպէս անցաւ այն առաւօտ .  
Բայց ահա տէս , կէսօրուան մօտ  
Մէկ տաք քամի մը փըչէց ,  
Մեր ծաղկանց տեսք շնորհք խամբեց .  
Յետոյ կարկուտ և յորդ անձրև  
Լըյս ծաղկանց մուծ բերին արև .  
Ոմանց տեղերն ալ չմընաց ,  
Շատերն ընկան թոռմած դեղնած .  
Եւ այլք կախուած գըլը՝ ի վայր  
Կ'երերային խեղճաբար :  
Իսկ մեր Շուշանն՝ որ առաւօտ  
Մեծ մեծ խօսէր յոխորտաբար ,  
Չարդ բուրդ եղած , աղտոտ-կեղտոտ  
Յէխերուն մէջ քաշ կու դար :  
Այն ժամանակ Մանուշակ ,  
Իր ցօղազարդ աչերով ,

Նայեցաւ մէկ մը չորս քով,  
Եւ ստեղծողին աաշով փառք՝  
Սըրբեց աքբին ցող-արտասուք  
Հառաչելով խորունկ խորունկ :

Մաղկունք, Շուշանն ու Մանուշակ թող մէկ դի,  
Խրատս այս ձեզի է օրխորդք նազելի,  
Ո՛վ Մանիշակք կենդանի.  
Չընաշխարհիկ դուք մայրացուք հայրենեաց,  
Մի սիրէք, մէջ տեղ ընկած, ապրիւ բաց,  
Այլ սիրեցէք աւելի  
Ձեր տունն ու անկիւն հայրենի,  
Եւ մայրական հովանի,  
Ազատք յազտից աշխարհի:  
Ըզձեզ գրասնէ հոն կարնան  
Պարկեշտ աչեր սիրական.  
Կ'ըլլաք ի կեանս բաղդաւոր,  
Նոյն և սերունդք ձեր բոլոր.  
Ապա թէ ոչ, բա՛ղդ արխուր,  
Ղուս ալ կ'իյնա՛ առաւելոր :

Դ

ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴԻ

Թուամաս աղբար և թորոս քաջ բարեկամ,  
Օր մը մօտի քաղաքն երթալ ըսկըսան.  
Թուամաս տեսաւ մէջ տեղ ճամբուն  
Ոսկւոյ քըսակ մը լեփ-լեցուն.

Վար ծըռեցաւ առաւ դայն,  
Արտորնօք դրաւ ի գըրպան:  
Թորոսն ասաց ուրախ սըրտով. —  
« Բաղդերնիս լաւ յաջողեցաւ: » —  
« Ձէ կըրկնեց թուամաս սղաղուկ նայուած. »

(քով.  
« Բաղդերնի՛ս այս տեղ չը յարմարեցաւ.  
« Թէ կ'ուղես, զըուցէ, բաղդըդ բանե- »  
(ցաւ: » —  
Շատ տըրամեցաւ սիրտ թորոսին՝  
Պաղ խօսքերով բարեկամին.  
Թէ և լըսեց իբր անտարբեր,  
Սակայն արկնը զարկաւ վեր:

Յետոյ դաշտէն յանառա մըտած ժամանակ,  
Վազեցին յանկարծ  
Թուամասի դիմաց  
Արկնկըզակ երկու կըտրիճ աւազակք:  
Խեղճը վախէն լեղապատառ  
— « Կորանք, կանչեց, թորոս աղբար: » —  
Աղբար թորոս անտարբեր,  
— » Կորանք, ասաց, մի զըուցեր,  
« Այդ տեղ, Կրայ, կու դայ յարմար. »  
Խոտորելով իբր ճամբան՝  
Գընաց մըտաւ ծառաստան:  
Թուամաս մինակ ինչ անէր.  
Սիրտը մեռնիլ չէր ուղեր.  
Ուստի շուտով քըսակն հանեց  
Աւազակաց ձեռքը յանձնեց:

Թէ դու յաջող ու լաւ օրիդ  
Քու բարեկամ չը յիշես,  
Քու բարեկամը ալ նեղ օրիդ  
Ձի նայիր բնաւ քու երես:

Ե

ԳՍՌՆՈՒԿ ԵՒ ԳՍՅԼ

Օրէնք ի յեռանկէս հրահրող,  
 վաղուց առակ մ'է լըսուած.  
 Այլ թէ շնտանի է թէ չէ,  
 Թող այս առակըս սրարդէ:

Առուակին քով Գառնուէն անփորձ մտեցաւ,  
 Անոյշ ջրբով անցընելու իւր ծարաւ:  
 Գայլըն քրտու ընենէն փըրթած,  
 Սովէն ոսկոր-կաշի դարձած,  
 Աչքը չորս դէն հասաւ այն տեղ:  
 Եւ տեսնելով Գառնուէն անմեղ,

Ուզեց իսկոյն պատուել լափել,  
 Խեղճ կենդանւոյն անպարտ արիւն:

— Բայց «Չէ, ասաց, թող համաձայն օրինաց,  
 (Սաած օրէնքն, էր այն օրէնքն Հւհրա՞յ),

«Այս գործին տանք մէկ աղէկ գոյն:» —

Եւ ըսկըսաւ գէշ գէշ կանչէլ.

— «Այ անըղգամ, լիրբ, աներես,

«Այդ որպիսի յանդըգնութիւն,

«Որ պըղտորես իմ խըմելուն.

«Պէտք է ատոր պատիժն կըրես:» —

Ժանտ վերագին գէժ Գառն անմեղ,

Անշարժ, հանդարտ կայնած իր տեղ,

— «Տէր իմ, ասաց, մի դու այդպէս

«Ի զուր տեղ ինձ բարկանար,

«Ձուրը վերէն կու գայ վար.

«Որով բընաւ մէկ կերպով  
 «Պըղտորելու կարող չեմ ես  
 «Քեզմէ շատ վար կենալով:» —

— «Դու պըղտորէս ջուրըս, պուսաց  
 Գայլը կատրած փըրփըրած,  
 «Ձայն ալ յիշեմ ինչ որ ասիր դու հերու:» —

— «Ես. — Էս չըկամ դեռ մէկ տարու,  
 Ասաց Գառնուէրը, «դեռ ես մօր կաթ կ'ու.  
 (տեմ):» —

— «Թէ դու չէիր ասող, աղբարդ էր՝ գիւ.  
 (տեմ):» —

— «Ես չունիմ աղբար:» —

— «Մի խօսիր երկար.

«Աղբարդ որ չէր՝ քեռիդ էր.

«Ձի դուք մեզն չէք խնայեր,

«Ոչ ձեր հովիւ ե ոչ ձեր շուն,

«Պէտք է ատոնց պարտքը տաս դուն:» —  
 Ասաց, խըղդեց Գառն ու կերաւ,  
 Եւ մըրմնալով գընաց կորաւ:

Զ

ԾՆՆԴԱԿՍՆ ԼԵՈՆ

Անգամ մը Լեոնը տղարեքի ցաւերով՝  
 Կը ճարճատէր, կը գուար գէշ գէշ ձայնով.  
 Ամեն կողմէ շատ բազմութիւն  
 Ժողովեցան ի տեսութիւն:  
 Իրարու այսպէս կ'ասէին.

— « Այս Լեռնն ո՛չ Լեռ կամ բլուրս՝  
 « Նոր աշխարհք պէտք է բերէ դուրս : »  
 Բայց Լեռնն ծնաւ մուկ մի չընչին : —  
 Առակիս նիւթ փուճ ալ ըլլայ  
 Խոր իմաստին խօսք չըկայ : —  
 Ո՛վ բարեկամ, մի թէ նրման  
 Չէն այն Լեռին ծընընդական  
 Մեր նորասէր հեղինակը,  
 Որոց գոչումն և աղաղակ  
 Կարծել կու տան թէ նոր Վերդիլ նոր Հոմեր  
 Պիտի ընծայեն հրաշալի բաներ :  
 Մէկ մ'ալ դուրս դան անոնց գողցած ապրան-  
 (քնին .  
 Ո՛ւր թէ անոնք ալ մէկմէկու յարմարին :

Է

ԱՂԱՄՈՐԴԻ, ԱՌԻԻԾ ԵՒ ԿԱՏՈՒ

Տեկին Կատուն, չեմ գիտեր, ինչ պատճառաւ,  
 Կամաց կամաց միս մինակ  
 Ելաւ դընաց դէպ յանտառակ՝  
 Եւ Առիւծին պատահեցաւ : —  
 Երկուքն ալ մէկ ցեղ դաղան,  
 Բայց ինչ տարբեր տեսարան .  
 Մէկին աչքէն կըրակ կ'երնէ,  
 Անցած տեղէն մահ կը ցանէ .  
 Կարծես մէկալն՝ հանդարտութեան է պատկեր,

Աչքը չառնուր գեանէն վեր :  
 Ահեղ ձայնով անտառներուն թաղաւոր՝  
 Բարև տըւաւ Կատունին .  
 — « Ո՛ւր է, ասաց, ո՛ւր քու աչերդ ահաւոր .  
 « Ի՛նչ է դէմք այդ ցաւագին :  
 « Կը խաբուիմ ես, դու մեղմէ չես : »  
 — « Ասա մըտքէդ ի՛նչ կ'անցընես :  
 Պատասխանեց հանդարտ Կատուն .  
 « Եթէ նայինք բընախօսից խօսքերուն ,  
 « Դուք մեր ցեղին սակ կ'իյնաք : »  
 — « Հասցա ինչո՞ւ համար այդպէս  
 « Ճըռգած, փոքրիկ, խայտառակ ,  
 « Անկերպարան բան դարձեր ես : » —  
 — « Կատուններուն պէս եթէ դուն ,  
 « Հանդարտութեամբ ասաց Կատուն ,  
 « Ադամորդուց ձեռք մատնըլիս՝  
 « Կը խեղճընաս կը խոնարհիս ,  
 « Ահեղութիւնդ մէկդի թողած՝  
 « Գերի կ'ըլլաս նոցա դիմաց : » —  
 Մընչեցիլով զայրագին ,  
 Ասաց Առիւծը Կատունին .  
 — « Առիւծի թաթըս քեղ վըկայ ,  
 « Թէ դոցա մին ձեռքս իյնայ ,  
 « Կըտոր կըտոր պիտի պատուեմ ,  
 « Հանեմ ցեղիդ հին ոխն ու քէն : » —  
 Քիչ մ'ալ առալ դընացին՝  
 Մարդ մը տեսան փայտահար ,  
 Որ շարժելով սուր կացին  
 Մեծ մեծ ծաւեր վար կու տար :  
 Կատուն դարձաւ Առիւծին .  
 — « Տեսա՞ր, ասաց, Ադամորդին ,  
 « Թէպէտ և ինքըն փոքր ըլլայ ,

- « Նայէ ինչ մեծ գործ կը տեսնայ : » —  
 Առիւծին աչքն արիւն կոխած՝  
 Քանի մ'անդամ ցատքէրով՝  
 Եկաւ հասաւ մարդուն քով,  
 Եւ ահադին ձայնով դուայ .
- « Անգութ անսիրտ Ադամորդիք ,  
 « Չարութիւննիդ հասաւ երկինք .  
 « Կատուներուն յանցանք ինչ է ,  
 « Որ այդ կիրը \* ձգեցիք : » —
- « Խընդրեմ , ասաց մարդը , ներէ  
 « Ո՛վ մեծագոր թագաւոր ,  
 « Կը ճանաչեմ զիս յանցաւոր ,  
 « Դու ինչ պատիժ ալ տաս ինձ  
 « Մեծ մեղքիս դէմ է ոչ ինչ :  
 « Բայց դու վեհաղըն , տեր արքայ ,  
 « Թող այս գործիս մէջ ալ աշխարհք՝  
 « Վրադ արմըննայ զարմանայ ,  
 « Եւ տայ քեզ բիւր դովասանք  
 « Թէ կը պատժես չարերը խիստ  
 « Բայց քո կըրիցըդ յաղթես մըտ :  
 « Դի՛ր վեհ թաթերդ այս ճեղքիս մէջ ,  
 « Եւ այս փայտին ճըղքէն վերջ՝  
 « Դու իմ գըլխուս թափէ քու սաստ բար .  
 (Կուժիւն .
- « Ես կ'ընդունիմ իբրև ծառայ քո նըկուն : »  
 Այս գովեստից անոյշ մուխէն  
 Խեղքն Առիւծին գնաց գըլխէն ,  
 Աճապարելով  
 Անըզգայ կերպով  
 Վերցուց դըրաւ իր ճիրաններ  
 Ուր որ մարդն այն կը ցուցնէր :

\* Խեղճ վիճակ :

- Երբ կամացուկ մ'Ադամորդին  
 Փայտին սեպերն դուրս հանեց ,  
 Չօրեղ թաթեր սէգ Առիւծին՝  
 Բրունըւեցան ճեղքածին մէջ :  
 Եւ փայտահարն այն ժամ կայինը բըռնած՝  
 Եկաւ կեցաւ դէմ Առիւծին անձըրկած .  
 Թափ մը տուաւ իր վարժ և կիրթ թեւերուն ,  
 Երտակ հարուածն իջուց խեղճին ճակատուն :  
 Առիւծին դէմք՝ քիթն ու բերան  
 Արիւնլըւայ իրար անցան ,  
 Եւ դառնագին էրած սըրտով ,  
 Վերջին շնչով՝ հեքհեքով ,
- « Կատու , ասաց , հոգիդ սիրես ,  
 « Հիմա եղայ ես ալ քեզ պէս .  
 « Թէ չէ , իմ վերջըս ինչ է : » —
- « Բու վերջդ , ասաց Կատուն , բուրդ է .  
 « Ահուայ ահուայի վրայ դի՛ր համբերէ .  
 « Ա՛լ այս աշխարհիս բանն անցաւ քեզմէ ,  
 « Դու քու անդին տալու համարդ մըտա .  
 (ծէ : » —

Երկայնամիտ բարակ հանձար  
 Ամէն ուժի դէմ գըտնէ ձար :

## Ը

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

Սուլած Աղուէս մը չգիտեմ ո՛ւր  
Կ'երթար տըրտում ու տըխուր.

Մէկ մ'ալ յանկարծ դէմն ելաւ, —

Հիանալն բան իրաւ, —

Պատի մը տակ դէպ 'ի վեր

Խաղողնիքի\* շէն ճիւղեր:

— Ի՞նչ կ'ուզէ սիրտ, — հա՛ շարք ու շարք

Խաղողներու ամէն աեսակք.

Հարմամատունք, այծըստինք

Եւ այլ խաղողք թանկագինք.

Որը գեղին ոսկեփայլ,

Որը կարմիր՝ սևացեալ,

Սմէնք հասուն և թափանց

Մէկ քան ըզմէկ գերազանց:

Խեղճ՝ Աղուէսին հարուստ ակումն,

Բէրնէն շողիքն վազեցան.

Ա՛խ, ինչ կ'ըլլար որ մէկ ողկոյլ

Մէկը կըտրէր տար Աղուխուս.

Որ կարծես փորըն դև մտած,

Երկու թաթից վըրայ ելած,

Յատքեց վազեց, խածաւ փըրցուց,

Հաղար հընարք՝ խէլք բանեցուց.

Բայց հասնելու չեղաւ ճար.

Կուղերը վեր, ինքը վար:

Ա՛յն ատեն սիրտը տըլուած,

\* Արմատ կամ թուփ խաղողոյ:

— « Թի՛ւ, էս անխէլք էմ, ասաց,

« Որ աղոխին ետեէն

« Կ'անցընեմ իմ թանկ ատեն.

« Միշտ այդպիսի փուճ՝ բաներ՝

« Մարդկիներուն կ'ըլլան կեր: » —

## Թ

## ԱՆՏԱՌ ԵՒ ԿՐԱԿ

Բարեկամիդ սիրտը նայէ,

Ձըլայ թէ շահ փընտուես իրմէ:

Սհա քեզ այս առակ

Ըլլայ լաւ օրինակ:

Եւ թէ անոր չըհաւնիս՝

Օրինակովը խրատուիս:

Անտառին քով կրակը մըխար,

Ոչ ոք իրեն նոր փայտ կու տար.

Քանի կ'երթար կը մարմըրէր՝

Գրեթէ արդէն մոխիր կատէր:

Յանկարծ նոր խէլք մըտածեց.

Բաղքն ալ, իրաւ, յաջողեց:

— « Եղբայր, ասաց, Անտառին,

— Որ հոն գըտուէր իր ձախ գին, —

« Ի՞նչ վիճակի էս հասեր.

« Ո՛ւր են այն քու տերէններ: » —

Անտառն անփորձ գըտուեցաւ՝

Եւ սիրտն էլած խօսեցաւ.

— « Այս հովերուն, այս ցըրտուն  
 « Որ վայ բերին իմ գըրխուն,  
 « Աւ ինչ ինձի հարցընես.  
 « Զմերուան հարցո՛ւ թէ կ'ուզես -  
 « Բոլոր գարուն և ամառ  
 « Աշխատելով անդադար,  
 « Հազիւ չորս դիւս զարդարեմ'  
 « Որ սուտ աշխարհք վայելեմ',  
 « Յուրտ պախըրցին\* մէկ մ'որ գայ'  
 « Բոլոր տերևս վար կու տայ.  
 « Ա՛լ անկէ վերջ ինձ համար'  
 « Արևուն լոյսն է խաւար: » —  
 Զար սիրտ Կըրակն ոգի առաւ'  
 Անոյչ անոյչ վըրայ բերաւ: —

— « Սիրուն եղբայր, մի վախնար'  
 « Քու ցաւերուդ ալ կայ ճար.  
 « Զեռքէս եկածն ես կ'անեմ',  
 « Որ քեզ ցըրտէն պոշտպանեմ: » —  
 Աչքը գոցեց՝ բերան բացաւ,  
 Իրան ու սուտը դուրս տըլաւ:  
 Մէկ մը ինք զինքն Աստուած կ'անէր,  
 Մէկ մ'արևուն հաւսարցընէր: —  
 « Պարծի՛լ կ'ասեր, չեմ սիրեր  
 « Եւ ոչ եղածը՝ ծածկեր:  
 « Հին Պարսիկներ խեղք ունէին՝  
 « Ըզիեզ փուճ՝ տեղ չըպաշտեցին:  
 « Հիմա նորէն բուսոց համար,  
 « Մէնք արևէն վար չենք մընար.  
 « Զըմեռը թող սաստկանայ,  
 « Թող ամեն բան սառ դառնայ,

\* Աշնան պաղ քամին:

« Կըրակն որ քովը մօտենայ՝  
 « Սառը շուտով ջուր կ'ըլլայ:  
 « Ամէն տեղ կան ջերմանոցներ՝  
 « Որ հասցընեն մեծ մեծ բոյսեր,  
 « Ուր ոչ տերեւքն կը թափին  
 « Եւ ոչ պըտուղքն պակասին:  
 « Ստոնց պատճառը թէ փընտուս,  
 « Իսկոյն՝ Կրակն է, կը լըսես:  
 « Դու ինձ կըտոր մը տեղ տուր,  
 « Քըչիկ մըն ալ կերակուր.  
 « Անկէ վերջ բան մի հոգար՝  
 « Յուրտէն քեղի ղէն չի դար: » —  
 Անմիտ Անտառն այս որ լըսեց,  
 Զըմերուան վախը փարատեց.  
 « Իրաւ, սասց, բարեկամ,  
 « Ամէն ուղածըդ կու տամ:  
 « Դու լոկ տերևըս պահէ՛  
 « Բոլոր Անտառը քուկդ է: » —

Այլ քիչ անցաւ, շատ զըջաց.  
 Բայց բան բանէն էր անցած:  
 Կրակը բնութեամբ հանդարտ չէ,  
 Զամենքն էրել կը սիրէ.  
 Անտառէն ներս մըտնելուն պէս  
 Էրեց մըրկեց չոր խոտն ու սեղ.  
 Անկէ ետև շատ չի քըշեց՝  
 Բոցը ծառոց դադաթն հանեց.  
 Բոլոր Անտառը կրակ դարձաւ,  
 Ծըխով երկինքը լըցուեցաւ:  
 Մեծ կաղնիներ, ծեր կընձնիք  
 Եւ երկրիս պէս հին մայրիք,  
 Որոց սըփուած զով շուքին տակ՝

Հանդէսը ճամբորդ յօր հասարակ,  
 Երկու երէք ժամուան մէջ  
 Դարձան եղան մոխրի շէղջ:

Ժ

ՈՉԻՍՐ ԵՒ ՇՈՒՆ

Ոչխար մը Շան կը գանգըտուէր,  
 « Կը զարհուրիմ, կու լամ, կ'ասէր,  
 « Երբոր մըտացըս առջև գան  
 « Մէր ցաւալի կեանքն ու վախճան:  
 « Դու ալ գերի ես ասկերախտ մարդկանց ձեռք,  
 « Հաւատարիմ, անհընաղանդ ոչ երբէք.  
 « Բայց արդեօք ի՞նչ փոխարէն  
 « Կը սպասես դու նոցամէն,  
 « Բայց եթէ ծեծ՝ թուր ու մուր,  
 « Եւ վերջապէս մահ տըխուր:  
 « Ես տարեկան բուրդս անոնց տամ,  
 « Կը մահըրդեն կաթէս պանիր ու մածուն,  
 « Լի բարութեամբ ինձմով կ'ըլլայ նոցա տուն,  
 « Ինձմով և դաշտք պարարտանան:  
 « Նոքա մեզ ի՞նչ անեն աղուր.  
 « Ո՛հ, ամեն մէկ Աստուծոյ օր՝  
 « Մեզմէ մէկմէկ ջոկեն մորթեն.  
 « Ողջ թէ ասրինք նոցա ձեռքէն՝  
 « Գայլ գաղաններն ըզմեզ պատուեն:  
 « Այսպէս երկու թուրի մէջ՝

« Զուր կ'աշխատինք մենք անվերջ,  
 « Եւ կը մեռնինք յուսահատած:  
 « Այս է եղեր ճականիս գըրուած:» —  
 — « Իրաւ է քու ասածդ ամեն,  
 « Պատասխանեց Շունն իմաստուն.  
 « Բայց ի՞նչ. — կարծես որ նորա՞ են  
 « Ինձմէ քեզմէ երջանկագոյն:  
 « Զէ, քուրիկ չէ.  
 « Այս խօսքըս լաւ միտքըդ պահէ.  
 « Զարի՛ իւրեն ուրի՛նէրէ,  
 « Զարւարէն՝ շաղ աղէ՛ է:» —

ԺԱ

ԷՇ ԽՈՐՀՐԳՍՏՈՒ

Անտառին մէջ ձոր մը կար,  
 Ուսկից անդին անցնելու  
 Զըկար չէնքով ճանապարհ:  
 Ատոր մէկ ձոր տեսնելու  
 Ժողովեցան կենդանիք  
 Ի խորհուրդ՝ մեծ պըզտիկ:  
 — Արդեօք կամուրջ շինեն նոր  
 Թէ ընցընեն դար ու փոր: —  
 Եւ զի Աւիւծն է ճանչցուած  
 Թագաւոր՝ մէջ կենդանեաց,  
 Աւաջարկեց Աղուխուն  
 Որ տայ խորհուրդ բանիւրուն:



Ճարտարամիտ Աղուէան խեղոյն  
Տըւաւ խորհուրդ հաճոյագոյն:

Ասաց. — « Տէր արքայ,

« Որպէս զի ըլլայ,

« Մէր ճամբան շիտակ

« Ամեն ժամանակ,

« Կամուրջ մը պէտք է մեզի.

« Թէ տէրութիւն ձեր հաճի.

« Հրաման տըւէք որ շինեմ,

« Զորիս վերայ զայն կախեմ: » —

Առիւծն ասաց. — « Ինչպէս գիտես,

« Այնպէս արա, վարպետ Աղուէս: » —

Աղուէան խեղոյն խշխանաբար՝

Տուաւ ամենուն պաշտօն յարմար:

Զբրշունք եղան որմնագիր,

Յաղթանդամ փիղը՝ ջրբիկի:

Իշուն ասաց. — « Իսկ քու գործըդ՝ էջ-աղբար

« Ըլլայ՝ կըրէլ շաղախ, տաղախ, կիր ու

(.քար: ) —

Այն ատեն էլն՝ իբր ատտիկեան ոմն ըզգօն,

Կամ թէ զուրցեմ ի կենդանիս նոր Պղատոն,

« Մենք ալ, ասաց, թէ և չըլլանք շատ գիտուն,

« Սակայն գէշ չէր այս գործիս մէջ... »

Վերայ բերաւ Աղուէան. « Լըսենք խօսքիդ.

(վերջ: )»

— « Սակայն գէշ չէր գիտնալ բանին էութիւն.

« Կամուրջ ձորիս երկայնքին՝

« Պիտի ձըգուր թէ լայնքին: —

« Թէ երկայնքին՝ ասէք շինուի,

« Շատ նիւթ, շատ ծախք պիտի լինի: » —

Իշուն այս նոր խեղքին վերան՝

Բոլոր ժողովքը միաբան՝

Հա՛, հա՛, խընտալ ըսկըսան:

Աղուէան խեղոյն խոհեմաբար՝

« Շէնքին դըրքին, ծախքին վերայ

« Մտածել, ասաց, մեղ կ'իյնայ.

« Իսկ դու նայէ էջ-աղբար,

« Ի՞նչ հրբաման որ լըսես

« Տեղն ի տեղօք կատարես,

« Առանց քովէդ խելք խառնելու: » —

Խորհրդական մարդ ըլլալու

Պէտք է կըտրուկ բարակ հանձար.

Բայց այդ դանձն ալ՝ դըժբաղդաբար

Շատ մարդկանց քով չես գըտնար.

Թէ այդ բնական տուրք չունիս,

Լըուէ, չափէդ դուրս չընկնիս.

Խըրատ քեղ՝ էշն առակիս:

## ԺԲ

ՄԵԾԱՏՈՒՆ ԱՆՄԻՏ ԵՒ ԱՂՔԱՏ

ԻՄԱՏՈՒՆ

Քաղքի մը մէջ կ'ապրէին,

Բազմութեան հետ ի միասին,

Մէկ ձոխ հարուստ Մեծատուն,

Բայց խելքին տեղը բան չըկար:

Ուրիշ մ'ալ շատ իմաստուն,

Փողի մասին խեղճ տրկար:

Այսպէս շատ հեղ կոյր և խեղ բաղդ  
Գործ կը տեսնէ անհամեմատ :

Միշտ Մեծատունը կը խընարար  
Իմաստնոյն խեղճ կենաց վերայ :

« Ի գրոց, կ'ասէր, քեզ ինչ շահ կայ՝

« Որ կը կարգաս անդադար :

« Գու վերագ ոչ որ կը նայի՝

« Եւ շատերուն էս ատելի :

« Ես ուտելով ու խըմելով

« Օր կ'անցընեմ ուրախ կերպով,

« Տունըս և տեղ չէն զըւարթ՝

« Սեղանս է միշտ բաղմամարդ :

« Իսկ քուկին քով այն ատեն

« Միայն խեղճեր կը վաղեն,

« Երբ մէկ մեծ փորձանքի դան : » —

— « Հոգ չէ, կ'ասէր, փիլիսոփան,

« Ունիմ էս ընկեր

« Խեղացի գըրքեր,

« Գըչով գոհ կ'ապրիմ :

« Փառք պարգևողին :

« Եւ թէ որ յանկարծ

« Յաջողէ Աստուած՝

« Ինձ ալ քեզի պէս

« Գանձով մեծանալ,

« Այն ատեն և էս

« Կարնամ ճոխանալ :

« Բայց եթէ դու, բարեկամ,

« Զախող բաղդի հանգիպելով՝

« Մեծութենէդ աղքատնարով՝

« Դառնաս ըլլաս ինձ նըման,

« Այն ատեն ինչ ձիւն

« Կու դայ քու գըլխուն : »

Յիրաւի շատ ատեն չանցաւ,

Մեր Մեծատունըն մնանկացաւ :

Սև արև, սև օրեր՝

Եւ թըշուառ գիշերներ՝

Շէն օրերուն յալըրգեցաւ :

Խեղճը տըրտում ու տըխուր

Սըգալով ողբալով

Տընէ տուն մուրալով

Գընաց ընկաւ մահուան դուռ :

—

ԺԳ

ԽԱՂԹՂԹԻ ՇԻՆՈՒՍԾ ԲԵՐԴ

Իրեկ կընեկ էրկու տըղով՝

Իրենց փոքրիկ կալուածին մէջ՝

Կ'անցընէին կեանք սպահով :

Նոյն դեղին մէջ կեանքերնուն վերջ

Գըտած էին իրենց նախնիք :

Հոն այն երկու ամուսինք,

Ինչպէս աղու աղանիք,

Կը ճարէին իրենց հացիկ :

Կինը կարէր, կ'էփէր թափէր,

Երեկն ալ արտ կը մըշակէր :

Ամառ իրկունը կ'ընթրէին ծառի տակ :

Իսկ երբոր դար ձըմբան աըխուր եղանակ,

Վառարանին դէմը շարուած՝

Խըրատ, յորդոր սիրով լեցուած

Տային ծընողք անկող զաւկաց

Թէ՛ բարեպաշտն ու իմաստուն  
 Կը գըտնան միշտ երջանկու՛թիւն :  
 Տեսակ տեսակ պատմու՛թիւններ ,  
 Բարոյական չին առածներ ,  
 Ոմանք գըրոց՝ շատն ալ բըրոց  
 Կը պատմէր մարգն իր տըղայոց .

Մինչդեռ կընկերն գորովով սիրաւու՛ն՝  
 Գըգուէր , շոյէր իր ծընուակները սիրասուն :  
 Մեծ զաւակնին էր բընու՛թեամբ շատ հան .  
 ( դարս ,

Միշտ կը կարգար , կը մըտածէր անընդհատ .  
 Իսկ փոքրիկն էր կըրակ ու բոց ,  
 Եւ կարգէ գուրս եռանդուն .  
 Նոր չարու՛թեանց կը փորձէր փորձ ,  
 Խեղքը միտքն էր խաղերուն :

Իրիկուն մ'ալ սեղանին դէմ՝ հօրը քով ,  
 Ուր կընթընած նըստած էր մայրը թևով ,  
 Երբ կը կարգար մեծը Ռոլէն , — հին պատմու՛ւ  
 ( Թիւն , —

Փոքրիկն որ չէր հոգար բընաւ բան դիտնալ ,  
 Ոչ Հուռոմոց , ոչ Պարթևաց քաջու՛թիւն ,  
 Թող թէ լըսէլ կամ կարգալ .

Խաղն թըղթերը շարելով թերթ առ թերթ՝  
 Մեծ խընամբով կ'ուղէր շինել բարձր բերդ .  
 Մինչև անգամ շուռչ առնելու կը վախնար ,  
 Որ թըղթերէն չըլայ թէ մէկն իշնայ վար :  
 Տեսնես յանկարծ մեր ընթերցող՝

— « Խընդրեմ , ասաց , մեկն է ինձ հայր ,  
 « Ինչո՞ւ ոմանք տիրապետող  
 « Աշխարհալ կոչուեցան ,  
 « Եւ ուրիշներ աշխարհալէն մեծ իշխան .  
 « Այս երկու բառ ունին իմաստ զանազան : » —

Հայրը մինչդեռ կը մըտմըտար  
 Տալ պատասխան որդւոյն յարմար ,  
 Եւ ահա փոքրը որդին  
 Վերջին թուղթը գընելով  
 Երևած բերդին երկրորդ յարկին ,

— « Եղա՛ւ » , կանչեց շըխալով :  
 Հոս անդրանկին համբերու՛թիւնը հատած ,  
 Մէկ հարուածով աւրեց եղբօրը շինած .  
 Որ ըսկըսաւ լալ և ող բալ :  
 « Որդեակ , ասաց , հայրն այն ատեն ,  
 « Աշխարհալէն էր քու եղբայր ,  
 « Իսկ դու եղար աշխարհալ : » —



ՈՒՂՏՔ ԵՒ ԷՇ

Ամառնային էր եղանակ ,  
 Եւ կէս օրուան բարկ արեգակն  
 Ուղղահայեաց ճառագայթիւ՛ք դէպ ի վար՝  
 Կ'էրէր մըրկէր գետին , դաշտերն արտավար :  
 Մէկ սայլավար՝ չգիտեմ ինչո՛ւ  
 Փոխանակ էլ կամեղ լծելու ,  
 Ուղտեր լըծէց իր սայլն :  
 Սովորաբար մեծ տաքերուն  
 Ուղտերն՝ ի դաշտս կ'արածին ,  
 Այս է իրենց արտօնու՛թիւն :  
 Հիմա Ուղտերը զայրագին  
 Նայելով ծուռ ծուռ սայլորդին ,

Զարկին ջարդ բուրդ հոտըրաւեցին  
 Լուծը և սայնն անիւնեքով:

Դեռ անով ալ գոհ չեղան,

Ու այլանդակ գեշ ձայնեքով՝

Հա մէկմէկու դէմ ալ ելան:

Թընդաց գետինն ոտքերուն տակ,

Տըւին լեռներըն արձագանդ:

Խաղաղասէր սիրտ իշուկին

Չըգիմացաւ այն ազմուկին.

Հեռուներէն վազէց եկաւ՝

Արուողներուն մէջը մտաւ.

Մէկուն կը զըռար. — « Կեցի՛ր .բէջ մ'աղբար, »

Մէկալին, — « Հանդարտ, այդպէս բան չըլլ  
 (լար: ») —

Իսկ Ուղտերըն կատաղած,

Աչքերնին մոռթ կոխած,

Առին զԻշուկն ոտից տակ՝

Մեջնորդն եղաւ շան սատակ:

Երբ մեծամեծք կը կըռուրտին,

Փոքրեր փոխան մէջ մըսնեղու,

Պէտք է որ լաւ սխտրաստուէին՝

Իրենք զիրենք պաշտպանեղու.

Ապա թէ ոչ՝ — « Ուղտեր կըռուան,

« Իշուկը կ'ըլլան ոտից կոխան: » —

## ԺԵ

### ՍՈՒԻԾ ԵՒ ՄՈՒՆ

Չիջողութիւնն ու հեղութիւն

Ամեն գործոցըդ հիմնն դեր.

Թէ Սողոմոն ըլլաս գիտուն,

Դարձեալ ըզքեզ տղգէտ ճանչցիր.

Եւ թէ ուժով Տորբոյ պէս

Ժայռերն ի ծով գըլորես,

Դեռ մի կարծեր թէ քու առջև

Ամենք սիտի բըռնեն բարև:

Յիշէ Մուրդքէն որ ըզՀաման

Կարցաւ հանել ի կախաղան.

Դարձիր նայէ և մեր Մունին

Որ Ասիւծուն հանեց հողին: —

Չըգիտեմօր մ'Ասիւծն ինչո՞ւ

Մունին ծուռ ծուռ նայեցաւ.

Ա՛յնպէս այս բան գըլպաւ սըրտին

Ա՛յն անըջան միջատին,

Որ առանց չափը նայելու

« Վըրէժ, » կանչէց և ոտք ելաւ:

Ծիծաղական բան է իրաւ.

Ո՞վ է Ասիւծն և Մունըն ո՞վ.

Բայց Մունը ոչ միայն խօսքով

Հապա գործով կըռուի ելաւ:

Բացաւ թևերը թըռաւ վեր,

Պատերազմի փող կը զարնէր:

Առիւծն ըզՄուն արհամարհեց՝  
 Բայց նա յանդուգըն ձեռներէց՝  
 Չայնը ձըգած, գըլըր գըլըր  
 Ման եկաւ հեղ մ'անոր բողբոջ,  
 Յետոյ շիտակ ճակատին վըրայ:  
 Առիւծն ուղեց մէկ հարուածով  
 Մըջատն անել արիւնըւայ:  
 Ու կամացուկ յետ քաշուելով  
 Քովի ծառին՝ այնպէս ուժով  
 Յանկարծ զարկաւ ճակատն ասէղ,  
 Որ մէջտեղէն ճաթեցաւ,  
 Եւ տաք արիւնն իբրև հեղեղ  
 Երեսն ի վայր վաթեցաւ:  
 Եւ մինչդեռ խեղճըն կարծէր  
 Որ ոսոխին յաղթեր էր,  
 Սատանորդի Մունն ակընթէն  
 Չեղաւ, կ'ասէր հեգնելով:  
 Այս խայթող խօսքն ալ լըսելով՝  
 Սիրտ Առիւծին փրթաւ տեղէն.  
 Կատղած փրփրած մաւրնչեց դռաց,  
 Մէռնի՛մ էրնամ, յուսահատած.  
 Եւ ձըգելով զինք ի գետին,  
 Գըլըրսն ոտքեր ասդիս անդին  
 Չարկաւ ջարդեց ու կոտորեաց:  
 Բողբոջ անտառ ելաւ ի դող,  
 Երկինք գիղուէր փողն ու հող:  
 Յետին անգամ մը մաւրնչելով  
 Թէ շունչ թէ կեանք՝ հառաչելով  
 Քաղան բերնէն դուրս փրչեց:

Ուրեմն հիմա մեր Աքիւլէս,  
 Մունն է, Առիւծը չըկարծես, —

Օդուն մէջէն թւեր բացած՝  
 Նայեցաւ մէկ մ'աչօք խոժոռ  
 Առ սատակած նորըն Հեկտոր.  
 Եւ սիրտն անով պողըշտըկած,  
 Թողուց ըզդին՝ թըռաւ ի վեր.  
 Ըզյաղթանակն ոչ կոյր Համեր՝  
 Այլ քաջ Աքիլս այս ինքն էրգէր:

## ԺԶ

### ԳՕՅԼ ԵՒ ՄՈՒԿՆ

Գայլը քաղցած խըլեց հօտէն մէկ գէր ոչխար,  
 Ու սիրտն ի դող վաղէց փախաւ դէպ ի յանտառ,  
 Հոն ոտք գըրաւ թէ չը գըրաւ  
 Խեղճ կենդանին դետին զարկաւ,  
 — « Ա՛յ, պոռալով ապուշ անխելք,  
 « Քիչ մընաց որ զիս տայիր ձեռք:  
 « Ինչ և իցէ՛ լաւ պըրծանք  
 « Այս անգամ ալ անվրտանդ: » —  
 Կոխեց փորին սուր ակուններ  
 Գունչն ետեւէն կրօեց ի խոր,  
 Ինչ կար չըկար՝ լափեց բողբոջ.  
 Խառըն ճարպով լի աղիքներ,  
 Սիրտ, թոք, փայծաղ  
 Արիւնթաթախ.  
 Եւ մէկ ժուժով, ինչ կը կարծես,  
 Կերաւ գերուկ ոչխարին կէս.  
 Մընացածին աչքը վըրան,

« Թողունք , ասաց , այդ ալ վաղուան : »

Ուուած արկուած՝ սատակի պէս

Շքնթրուկեցաւ գեանին երես :

Գլորացի Մուկն որսին հոտէն

Արտորնօք դուրս ելաւ ծակէն ,

Պինչք գէսլ հոն շքակելով ,

Եկաւ հասաւ Գայլին քով :

Եւ ոչխարէն բըրդոււճ մ' առած՝

Քաշքըշէլով իր ծակ գընաց :

Ի խոր քունէն Գայլն արթընցաւ ,

Բարկուծէնէն կըրակ դարձաւ .

Կանչ մը վերցուց անհնարին ,

Լեռներ ձորեր թընդացին :

« Հա՛ , պահապանք , հասիք , կանչէր ,

« Անտառիս մէջ դող է մըտեր .

« Արիք , բըռնէնք զանըզգամս այն ,

« Որ արժանի է խիստ մահուան : »

Այսպէս դատաւորք սուրբ արդարութեան

Անպոչ անժանիք գայլեր դեռ շատ կան ,

Իրենք արուեստով հընցած անըզգամ

Ուրիշ խիստ խիստ վըճիւններ կու տան :

ԺԷ

ԽՈՐՀՈՒՐԳ ԿԵՆՊԱՆԵՍՅ

Օր մը դաղանք և կենդանիք զանազան

Անտառին մէջ ի մեծ խորհուրդ ժողվեցան .

Մնիկ արգուծիւնն ինչպէս մեր՝

Նոցա մէջն ալ տիրեր էր .

Որդ այս բանիս դեղ դարման

Մեր պարոնաքըն ուղեցին որ գըտնան :

Մեծ ժողովքին գահագըլուխ Արիւծ նըստաւ ,

Վագերք , Գայլեր և այլ գաղանք իրենց կարգաւ

Բաղմեցան առաջակայք :

Ժողովականքն յետագայք

Ոմանք կըկղած , ոմանք կայնած ,

Այլ և ոմանք բարև բըռնած՝

Կը սպասէին Արիւծին

Որ՝ սկիզբն անէ ժողովքին :

Նա գուալով ամպի նըման՝

Ճառ խօսեցաւ ժողովըրդեան

Որ՝ մէկմէկէ բնաւ չը քաշուին ,

Այլ մըտքերնին ինչ որ ունին ,

Հասարակաց բարեոյն համար

Ասէն անվախ և անաչառ :

Վերջաբանին մէջ ալ աղդու խօսքերով՝

Կը խոստանար շքտիկէլ ամեն բան շուտով :

Արիւնախանձ Վագըն այն ատեն

Կանգնեցաւ վեր իւր աթոռէն .

— « Անտառիս մէջ , ասաց , արքայ ,

« Թափուած արեանը չափ չըկայ : »

Եւ դառնալով բազմականաց,

« Կարծեմ, զրուցեց, չէք նեղանար

« Թէ որ ամեն բան խօսիմ բաց... »

— « Շարունակէ, դուստր Ասիւծն իշխանաւ  
(բար:»

— « Արդարութեան անուշը լոկ

« Մնացած է մէջ մեր անտառին .

« Անմեղնեցուն լաց ու բողոք

« Կը վերանան մինչև յերկին : » —

— « Իրաւ է քու ասածդ ամեն, »

Խօսքը կըտրեց Գայլն անդիէն .

« Թէպէտ Ոչխարք ու Գառներ

« Մեղն համար են եղեր ,

« Սակայն՝ իրաւ՝ ամենայն բան

« Ունի իրեն չափն ու սահման :

« Մէնք աղբըրտիք, չափ ու սահման կորուսինք ,

« Չեն համբերեր մեր չար գործոց ալ եր-

(կինք :» —

Լքողք ճառին՝ ծափ զարնելով հաւնեցան .

Գառինք, Ոչխարք ալ սիրտ առին բերկրեցան :

Սոցա ետեւէն Խողն ելաւ յատեան .

Եւ ինչ կը կարծէք . այն նոր ճարտասան ,

Կոշտ ու պըլոշտ աըգեղ մարմնով՝

Խըռպոտ խոշոր ու հաստ ձայնով,

Այնպէս սիրուն և զօրաւոր ճառ մ'ասաց

Որ՝ բերաններ լքողներուն բաց մընաց .

Եւ ամենքն ալ վըրկայեցին աննախանձ ,

Թէ Խողն ճառն է աննրման գերազանց :

Ճառին մէջ նա պարզ ցուցընէր .

Անմաքրութեան բիւր վընամներ .

Մահտարաժամ՝ պէսպէս ցաւեր ,

Աղտոտութեան պըտուղներն են կը զրուցէր .

— Թէպէտ իրեն գըրլինն մինչև ոտից ծայր ,

Մաքուր ասեղ մը ձըգելըւ տեղ չըկայր : —

Իսկ Խողն վերջ Այծն ու Կապիկ ,

Մէջտեղ էլան տօտիկ տօտիկ :

Իրենք յայտնի Ափորդիտեայ արբանեակք ,

Պարկէշտութեան վըրայ երկայն ու բարակ

Ասին բաներ փոխն ի փոխ

Գովասանքներ ու ներբող :

Չըրդիմացաւ ալ Աղուէս .

— « Թագուոր, ասաց, ապրած կենաս ,

« Թէ որ մէկ մ'իկնձ ալ հրաման տաս ,

« Ես ալ ասեմ անցածներն իմ մըտքես : —

« Քանի որ այս մեր նոր իմաստակք ,

« Խեղքերէն դուրս ազատ արձակ ,

« Իրենց վաքքին ու բարքին դէմ

« Խենթ ու խելաւ պիտի փըչեն ,

« Մեր այս ժողովքն եղաւ փուճ տեղ ,

« Չարը մընաց դարձեալ անդեղ :

« Վագրըն առաջ մտքէ թող իւր գունչն արիւ-

(նոտ ,

« Դու, Գայլ, յիշէ սպտուած դառնուկդ այս

(առաւօտ :

« Խող անօգուտ են քու ճառերդ գերազանց ,

« Քանի որ ինքըք թաւալիս մէջ պըրդութեանց :

« Դուք, Կապիկ, Այծ, նախ ծածկեցէք ձեր

(ամօթ .»

Վերջը ասաց . « Խընդրեմ ներէք այս իմ արգար

(խօսքերուս ,»

Եւ կամացուկ մ'ելաւ դուրս :

Ետեւէն, այլք քոստ քոստ էլան .

Ժողով, ատեան, դատաստան ,

Ելան իսկոյն ցիր ու ցան :

Թէ և առակս այս կարծըլի  
 Որ շատերուն գըտաւ պատուի,  
 Բայց ինչ տեսայ և լըսեցի,  
 Ես համառօտ զայն գըրեցի: —

ԺԸ

ԿՏԱԿ ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ

Այնխոնջ վաստակ, կեանք ըղգաստ,  
 Են դրամագլուխ միշտ պատրաստ:

Երկրագործի մը կենաց վերջ մտենալով,  
 Իր զաւակները ձայնեց պաւ անկողնին քով.  
 « Որդեք, ստաց, ահա կենացըս վերջն հասաւ,  
 « Պէտք է շուտով վառեալ ճըրտղըս անցնի  
 (ընաւ.)

« Իբրև կըտակ սաեմ ձեզի խօսք միայն,  
 « Թէ հասկըցաք՝ այն ձեզ կ'ըլլայ բաւական: —  
 « Մեր արտին մէջը կայ մեծ դանձ մը թաղուած,  
 « Ձեր պատերէն չէ՛ այլ ի՛նչայնեսաց մընացած.  
 « Ուստի, տըղաք, բըրտինքնիդ մի խընայեք,  
 « Սուր արօրնիդ ամէն ծակ ծուկ բացուցեք.  
 « Օր մը չէ՛ օր մ'այդ դանձին դուր տէր կ'ըլլ  
 (լաք...)

Խօսքը կըտրեց այն խմաստուն ծերունին,  
 Փակեց աչքերն և աւանդեց իւր հողին:  
 Թողունք մեռելն՝ ու զաւակացը դառնանք.  
 Սոքա իրենց հօր կըտակին հըպատակ,

Փորփըրեցին ամեն անկիւն, ամեն ծակ.  
 Արտին բոլոր հող գետին  
 Տակն ու վըրայ խառնեցին.  
 Բայց չէ՛ թէ գանձ պահըստական,  
 Խանգրած դանկիկ մ'ալ չը գըտան:  
 Յետոյ, ասին, « Ինչ որ լինի,  
 « Փորած տեղերըս ցան ցանեցիք,  
 « Եթէ բուսնի, հաղար բարի,  
 « Թէ չը բուսնի՝ ողջ ըլլանք մենք: » —

Բայց ինչ չը բուսնի. ցորենն էրեսուն,  
 Վարսալն ու հաճար՝ մէկին տեղ յիսուն.  
 Թէ կորեկն սաես, մէկն էօթանասուն՝  
 Ժողկեցին որդեք խեղօք դեղացւոյն:  
 Շատ բան ծախեցին, մեծ վաստակ արին,  
 Հօրերնուն հողւոյն ողորմիս հանին:

ԺԹ

Ս:ԲԼՈՐ, ԿՏՏՈՒ ԵՒ ՄՈՒԿՆ

Մըկնիկն որ դեռ ինչ է աշխարհ չէր տեսած,  
 Մեծ փորձանքէ մը դիպուածով ազատած,  
 Չարմանալով զայն կը պատմէր մօր դիմաց.  
 — « Սնցայ, կ'ասէր, սա դիմացի բըլուրէն,  
 « Որ մեր աշխարհքը կը զատէ մէկալէն.  
 « Եւ ահա նոր բացուեցաւ տեսարան,  
 « Նայիմ՝ երկու կենդանիներ անըման.



« Մէկը քաղցրիկ , հեղահամբոյր , շնորհա-  
(զարդ ,

« Մէկալը խեւ , թեթևսօրիկ , անհանդարտ ,  
« Չայնը ահեղ և խոշոր ,  
« Գրըխուն վերև անդադար  
« Կ'երթար կու դար  
« Կարմիր մըսի մը կըտոր .

« Մըսի կտորուանք վըզին տակէն ալ կախուած .  
« Մեծ պոչ մ'ունէր ետի դիէն վեր ցըցուած .

« Թևերը լայն ու փետրաւոր  
« Վեր թըռչելու յարմարաւոր : » —

Այս օղաբիծ պատկերին տէր ,  
Չոր Մըկնիկն այսպէս նըկարէր ,  
Իբրև ահեղ հրէշ սոսկալի ,  
Կամ նոր ցուցանք Ափրիկայի ,  
Հարկաւ ամենք ալ հասկըցաք ,  
Որ էր դեղին Աքըր խօսնակ : —

« Իր թեւերովը , կ'ասէր ,  
« Երկու կըշտերըն ծեծէր .

« Եւ այնպիսի հանէր գոռում ահադին ,  
« Որ թէպէտ էս շատ վախկոտ չեմ , փանք բաղ-  
(գին ,

« Լեղասպատառ թողի փախայ ,  
« Ասի՛ Կըրողն ըզքեզ տեսնայ :  
« Իսկ մէկալին հետ անսպասձառ .  
« Կ'ըլլայի էս սերտ բարեկամ ,  
« Թէ անձոռնի հրէշն հօն չըլլար :  
« Նորա մերթն էր թաւշի նըման ,  
« Խայտարըղէտ ու գոյնըզգուն ,  
« Աչքերն էին խիտ վառլըռուն :  
« Նայուածք քաղցուէնի ,  
« Կեցուածք նազէնի :

« Վերջապէս ինձ , մարիկ , այնպէս էրեցաւ

« Որ նա մեզի է բարեկամ սըրտացաւ ,  
« Չի ականջներն ալ մերինին՝  
« Ամեն կերպով նըման էին :  
« Ես մօտեցայ ալ նորա քով ,  
« Բայց անհանդարտ կենդանին  
« Իր անշնորհք կերպերով  
« Ըտտխեց զիս որ փախչիմ : » —

— « Որդեակ , ասաց , մայրը Մըկնի ,  
« Այն քու կարծած հեղ կենդանին ,  
« Է չար կատուն մըկնադաւ ,  
« Պատիժ , կըրող , մահ ու ցաւ ,  
« Որ կեղծաւոր մարմնոյն մէջ  
« Ունի սիրտ չար և անզեղջ :  
« Իսկ միւսն որմէ դու շատ վախցար ,  
« Է մօտ դեղին Աքըր աղբար .  
« Նա զչար բարին մէկմէկէ  
« Չատել անդամ չըգիտէ ,  
« Եւ ո՛վ դիտէ օր մ'ա հա գայ ,  
« Որ խորոված ուտէնք ըզնա .  
« Իսկ մէկալէն՝ Տէրը փըրկէ ,  
« Թէ թաթն իյնանք՝ բաներս վատ է : » —

Նախ լաւ քննէ բնութիւն մարդկան և գոր-  
(ծեր ,  
Յետոյ փորձով քու գատաստանդ վըրայ բէր :

## Ի

## ՀԻՒՍՆԴԻ ԳՍՅՆԼԻՆ՝ ԿՈՌԻՆԿ ԲԺԻՇԿ

Պայն որկրամուլ և լայնբերան  
Անկուշտ անկուշտ լափելով  
Միս, մորթ, ոսկոր զանազան,  
Պատժըւեցաւ խիստ կերպով:

Գլուսաւ նա ճար, խիստ պատիժէն ազատեցաւ.  
Բայց ազատչին բարի-ձեռք տալն զըլացաւ:

Մահ էր անշուշտ գազանին վերջ,  
Զի մեծ ոսկոր մ'էր մընացեր կոկորդին  
(մէջ.)

Կուլ տալն ի ներս շատ էր դժժար,  
Գուրս հանելու հընար չըկար:  
Ուստի խըս խըս խըսխըսալով  
— « Թո՛ղ ալ մեռնիմ, կ'ասէր, շուտով: »  
Թէ պատահմամբ, կ'ուզես զըուցէ,  
Կամ թէ Գայլին յաջող բաղդէ,  
Երկայնկրտուց կուռնկըն կաւով՝  
Եկաւ հասաւ հիւանդին քով: —  
Սնըզգամն զայն որ տեսաւ.  
Վերջին ճար-ճարակ արաւ.  
Ոտքով դրլխով պոչ շարժելով  
Եւ ցաւադին արքաըքըցով,  
Հասկըցուց անցաւորին  
Որ՝ ճար մ'անէ իրեն ցաւին.  
Աշխատութեանը փոխադարձ  
Խոստանալով մեծամեծ վարձ:

Անհեռատես երկայն-աղբարն ալ խակոյն

Հաւատարմով նորա սուտ փուտ խօսքերուն,  
Երկայնաճիտ կոր կըտուց՝  
Կոկորդին խորն երկընցուց,  
Եւ խածնելով խոշոր ոլք  
Քաւեց հանեց արիւննուոգ:

Յետոյ մեղմով՝ խոհեմաբար,

— « Ո՛ւր է, ասաց, մեր վարձն, աղբար: »

— « Վարձ մի, կանչեց նա ժանտաբար.

« Անխէք կըուռնիկ, ամբչցիր,

« Այդ բաւական քեդի վարձ չէր

« Որ դու գըւլխդ ողջ պըրծուցիր.

« Նայէ մէյ մը, աներեսներ: » —

Անըզգամին բարիք անել՝  
Ճըմարտապէս մեծ վարձք է.  
Բայց փոխադարձը պահանջել,  
Խելօք մարդու նըշան չէ:

## ԻԱ

## ԳԵՂՈՅԻՆ ԵՒ ՄԱՀ

Պեղացի մ'յոգնած դագբած,  
Կըռնակը բեռ մը փայտ շաղկած,  
Կամաց կամաց ի տուն դառնայր:  
Արեւ էր նոր մըտած ի մայր.  
Բարակ անձրեւն ալ կը մաղէր:  
Գեղացիին սիրտը նեղ էր.  
Իրաւ տընսիը չէր հեռու

Բայց մինչև այն տեղ հասնելու՝

Ո՛րք հը պահեսքը թըշուառին :

Ձըդէց փայտերն ի գետին ,

Եւ ինքն անոնց վըրայ ընկած՝

Ձարալից կեանքը մըտմտաց .

Ձայրացաւ սիրտը խեղճին

Աչքերն արցունք կոխեցին .

— « Ո՛ւր ես , կանչեց , ո՛վ անդուժ Մահ ,

« Ա՛ն կեանքըս , ա՛լ ձանձրացայ , ա՛հ : » —

Մահն յանկարծ , չեմ գիտեր ուստի ,

Ձեռքը բըռնած սուր գերանդի ,

Եկաւ կեցաւ մարդուն զմնաց .

Աչքերըն փոս , գէմքը հողոս ,

Ոսկոր կաշի , ձայնը խըռպոս .

— « Ինչո՛ւ , ասաց , ինձ ձայն տըւիր : » —

Մարդը վախէն չըւարած՝

— « Խընդբեմ , ասաց , ինձ օգնէիր

« Որ՛ նորէն այս բեռըս շաղկած՝

« Հասնէի տեղըս չը մըթնած ,

« Կը սպասեն ինձ հոն անհամբեր : » —

Մահը իրաւ ամեն ցաւեր

Կը վերցընէ , ու վերջ կու տայ ,

Բայց ձանձրութեամբ կանչելն ըզնա՝

Մեր բընուժեան հակառակ է .

Ամենքէն խեղճ արարածն ալ ,

Նեղ օրն ու կեանքն տառապեալ

Դեռ քան ըզմահ վեր կը դասէ :

### ՄԱՍՆ ԵՐՐՈՐԻ

## Ա.

### ԳԱՌՆՈՒԿ ԵՒ ԱՅՅՔ

Թի է ժողով առաքինեաց՝  
 Անօրէն ոք այր ըստ գիպաց ,  
 Եկեալ խառնի ընկերչակ՝  
 Ոչ մեծապէս է վըտանդ .  
 Ձե բազմութիւնք առաքինեաց  
 Լինին չարին խոչ մախանաց :  
 Այլ թէ է ջոկս անօրէն ,  
 Առաքինին տարագէմ ,  
 Անկեալ լինի հանդու՛նակ ,  
 Կըրէ պատիժ դըժընդակ :

Յիմաստ բանիս առակաւոր ի նըկար՝  
 Աւցուք զԱյծից աստ ըզՏօրան և ըզԳառն :

Գառն ի հօրան ըմբոստ Այծից կամակար  
 Թողեալ ըզՏօրս համադդեաց յարեցաւ ,  
 Եւ ընդ նոսս չոգաւ ընդ վայրս առապար .  
 Այլ տես զինորդ ընդ փոյթ կըրեաց ապաշաւ :  
 Քաջ վարժք էին ոտք Այծից ,  
 Գընալ ընդ վախըս ժայռից ,

Եւ շուտափոյթ Այծք համայն  
 Ընդ ժայռս ի վեր ընդոստեան .  
 Քարակոշկոճ եղեալ միայն անդ Քառնուկ ,  
 Իւրում բաղդին աւաղ կարդայր և եղուկ :  
 Մայէր ուժգին յայն ի տանջանս ,  
 Սնձաւք տային արձագանդս .  
 Մայրիկ , գոչէր ողորմագին ,  
 Այլ ոչ լըսէր մայրիկ նըմին ,  
 Ձի չէր անդէն , այլ ի հօսին :  
 Չաչկոճնս յածէր թափառական ,  
 Ամենուրեք ցնորք խօշական .  
 Սարսուռք յսկերբս դընան :  
 Խոնարհէցաւ և արփին ,  
 Գիշեր պատեաց զամենայն :  
 Ձմութ գիշերոյն առեալ անձին օդնական՝  
 Որկորագէտն էհաս յանկարծ Քայլ գազան ,  
 Եւ ի տեղուջ անդ վատշուէրն  
 Յօշեաց ըզՔառն և եկեր :

Բ

ԿՍՂՆԻՆ ԵՒ ԵՂԷԳՆ

Կաղնին երբեմն յեղէգըն կոյս խոնարհեալ :  
 — « Ե՛ն են , ասէ , քեզ մեծ պատճառք քան .  
 (բարտալ  
 « Ընդդէմ քնութեան յիրաւի ,  
 « Ընդ քո նըստի՛հ եղկելի :  
 « Չընչին ճընճղուկ՝ թեթեաբեռն ի մարմին

« Վասն չքո բեռն է ծանրակիր ահագին :  
 « Եւ մինչ ղեփիւռք հեղաճեմ՝  
 « Հաղիւ հաղիւ ըզջուր ըճիւղ ծածանեն ,  
 « Ըզքեզ հակեն գըրուխ ի վայր խոնարհ յերկիր .  
 « Մինչ էս անշարժ կացեալ ի կայս իմ աստէն ,  
 « Սրարատեան իբրեւ Մասիս տապանակիր՝  
 « Ըզճաճանչիցն արփենից  
 « Ընդոստն լուխոց արգելից ,  
 « Ըզմըրըրկացն բըռնութիւն խորտակեմ :  
 « Քեզ՝ ամեն հողմ է մըրըրիկ ,  
 « Ինձ փոթորիկն է ղեփիւռիկ :  
 « Եթէ լինէր երբէք քեզ մարթ ,  
 « Մնանէ ի շուք իմ տերեւոց ,  
 « Ձորըս սըփուեալ ծածկեմ էս արգ .  
 « Ձհովիտ , ըզգաշա զարտավար ,  
 « Ոչ մեծապէս տագնապէիր հողմավար .  
 « Ձի ասրաստան քեզ լինէի դէմ հողմոց .  
 « Այլ ձեր ծընունդք ի ճախին վայրըս պա-  
 (տահէն ,  
 « Յաճախակի անդ՝ ուր հողմունք թագաւու-  
 (րեն :  
 « Բաղդին ընդ ձեզ գնացք ինձ թըլին ապ-  
 (օրէն : )  
 — « Գու՛թ եւ գորովդ , սասց իղէգն , որ զլինէն ,  
 « Բարերարի են քո սգուոյդ արգասիք .  
 « Այլ ինձ լըսել թէ ախորժեոս սակաւիկ ,  
 « Օն գու ի բաց ընկեա զքոյին խնամսին .  
 « Ձի մանաւանդ քան ինձ , են քեզ ահագին  
 « Հողմք եւ մըրըրիկք սաստիկազին :  
 « Հակիմ , այս՝ էս ի խոնարհ ,  
 « Այլ կործանիմ ոչ իսպառ :  
 « Գու մինչև ցարդ ընդդէմ հողմոց բըռնու՛թեան՝

« Տըւեալ զԹիկունս կաս ի կայիդ անասան .

« Այլ սահայն չեւ է կատարած : » —

Այն ինչ Եղէզն ասէր զայն՝  
Ի Տիւստոյ կուսէ յանկարծ  
Շրջեայազերծ սուրաց Այս,  
(Գորոյ հանգէա Եւոզոս ծեր  
Մինչեւ ցայն օր ծընեալ ոչ էր) :  
Ըզգէմ կալաւ Կաղնին սէգ,  
Խոնարհեցաւ անդ Եղէգ :  
Ուժգին շնչեաց Այս կըրկնակի  
Մինչև խըլեաց արմատաքի

Ըզնա՝ ոյր դըուխ մինչև ի յամբս հասանէր,  
Եւ ընդ ոտիւք կոխէր ըզլիճս անվէհէր :

♀

## ԷՇ ԵՒ ՍՈՒՍԿ

Էջ պատահեալ Սոխակին,  
« Էւր ինձ, ասէ, բարեկամ :  
« Համբաւք երգոցդ, յիս հասին .  
« Էր ինձ վաղու մեծ փախադ  
« Լըսել ըզձայնդ ներգաշնակ,  
« Ու առնել ասպ դատաստան,  
« Իցէ՞ արգար՝ զոր ասեն : » )  
Ի ցոյց ձայնին գեղապանծ  
Ճոխաց Սոխակն եւ սուլեաց,  
Զարմանազան ի բիւր դաշնակ  
Փոփոխելով զիւրն եղանակ :

Մերթ նըւագէր նա մեղմիկ  
Զերդ բացական ինչ սըրինգ .  
Եւ մերթ բեկբեկ ի հագագ՝  
Լընոյր զմեղրին և սուրակ :  
Ամենքեան յակճիոս կային  
Արշալուսոյն քաջ երդեցկին .  
Լուցին հողմունք, հաւք օդապարք,  
Մակաղեցան ուլք և ոչխարք .  
Զմայլեալ նուագօքն այն եւ հովուին՝  
Ժըմտեալ հայէր ընդ սիրուհին :  
Մինչ դադարեաց եւ Սոխակ,  
Յարեաւ անդէն Յաւանակ,

Եւ զիշական ճակատն հակեալ մինչ յերկիր,  
Յայս ձեւ, ասեն, եհատ զերգչէն ըզլըճիւ .

— « Մարթ է լըսել բեղ անտաղտուկ,

« Այլ այն է ցաւ և եղուկ  
« Զն աքլորին չես դու ծանօթ՝

« Որ ճոխանայ ի մերս արօտ :

« Ճարտարագոյն եւս լինէր երգդ, ո՛վ Սոխակ,

« Թէ առ նրմա կըրթէիր սուղ ժամանակ : »

Անբաղդ երգչին լըւեալ զայն դատ իշական,  
Թըւիչս առեալ սլացաւ ընդ վոյր բացական :

Փըրկեա ըզմեղ, Տէր Աստուած,  
Յ'իշապիսի դատողաց :

Դ

## ԱՐԵՎԱԿՆ ԽՕՍՆԱՅՐ ԵՒ ԳՈՐՏԻ

Ի հարսանիս բռնաւորին,  
Մինչ ընդ գինիս մրտեալ ռամկին  
Ուրախանայր յերգ և ի սրբ,  
Չայս՝ Եսովպոսն յոգնահանձար  
Առակ սրտաջաճ յայն ի գէպ  
Նոցա էարկ առ ՚ի վէպ:

Նոր հաստատեալ զաստեղջ ջղլիբ  
Զվերին կամարն և ծովուն ծիր,  
Ապա խորհէր երկնիցն արքայ,

— Արև՝ և ոչ զայլ որ իմա, —

Ըստ օրինի հասարակաց  
Ածել իւր կին զոր յաստեղաց:  
Անդուսա հասլճեպ ջոջ ծեր Գորտեր  
Բարձեալ ըզգլուէս ընդ ջուրս ի վեր,  
Առ Արամազդ ամպրոպայոյցն,

— « Եթէ ի քեզ կայցէ գեթ դոյցն՝

« Առ քո, ասեն, գուժ՝ արարածս,

« Շըրջեա՛ զարեգ զայդ ի մըտաց:

« Ըզմին եւեթ հաղիւ հաղ,

« Խարչեալք, տասեալք հանապաղ,

« Տանիմք՝ ճըգնեալ զէտին ճիգն,

« Եւ այն չիցէ՛ մեզ հերիք:

« Վայ՛ մեզ. եզուկ համայն ազին գորտերոյն՝

« Թէ արասցէ դա և որդիս հօրամոյն: » —

Զիրաւացին լուեալ Գորտուցն ըզբողբ

Զեկաց երկար հայրն աստուածոց անողբք:  
— « Վաղիւ, ասէ, մինչև արիւտոյն համասփիււռ  
« Ըզճառագայթս իւր տարածեալ ի յերկիր,  
« Երկինք բոլոր և յաստեղաց անձնիւր որ  
« Թող կապուտակ արկցեն ըզբող զերեւ  
(սօք: ) —

Անտի և այր այգուն այգուն՝  
Արևն ի տես իւր սիրուհւոյն,  
Արկեալ զիւրև հուր կըրկնոց,  
Եւ զճաճանչիւք հարեալ բոց,  
Յածեալ շըրջի յար թափաւկոս,  
Յերկին ի ծով, յերկրի ոլորս,  
Եւ ոչ գըտեալ ուրեք, աւաղ,  
Ըզխօսեցեալ հարսնին չըքնաղ,  
Դարձեալ երթայ սըրտիւքն խոց,  
Ողբալ զիւր բաղդ յալեացն ի ծոց:

Ե

## ԱՅՏ ԵՒ ՈՐՈՋ

Այժ մօրուանի ընդ Որոջին գըմակաւոր  
Ուղւոյ եղեն ի գնալ ի վայր մի հեռաւոր:

— Եւ ո՛ր իցէ մեզ գընալ

Ընդ ճանապարհ այլ եւ այլ,

Ընդ առաջ մեր ելցեն ո՛չ

Բազմասպտիկ խուժք եւ խոչ:

Ամենուրեք լերինք, ծործորք,

Զուրք յաղթաջուրք, վնչք խորածորք:

Եւ մանաւանդ ուր եւ Այծից ոտք ընթանան,  
Զի աղբ Այծից թողեալ ըզգիւր՝ սիրէ զխոսպան:

Սոցա նք առաջ եւ վըտակ ինչ,  
Որոյ յատակ երեւէր ջինջ:

Յայն մերձեցեալ հարին զպատուք ծարաւոյն.  
Սակայն ոչ անդ յանդէր նոցա ծայր ուղեոյն.

Հարկ ի վերայ այլ եւքս կայր կարեւոր,

Յայնկոյս առուին լինել նոցա ուղեւոր:

- « Ոստնուչ, ասէ, Այծն Որոջին,
- « Քոյր իմ՝ պարտիմք ընդ ջուրս առուին. »
- ( Որ վասն ինքեան չէր ինչ նոր ),
- « Թեքեւս իցեն ջուրքս խոր: »

- « Այս », Որոջն ընկերին
- կըրկնեալ, էտ թափ դըմակին.
- Եւ յոյր մարմնովն՝ իբր ըզնեա
- Ոստեալ ընդ ջուրն էտ ընդ էտ:

Այլ ընդ այլոյ ընդ յեղակարծ իրն ընդ այն  
Յղեալ Այծուն, բըրբիջ էբարձ ծաղրական:

Դարձաւ Որոջն. « Եւ զինչ, ասէ,

« Այգպէս էղբայր, ըզքեզ ի ծաղր յոր  
( Դորէ: »

— « Եւ զհարդ ոչ, պատասխանէ Այծն աղա  
( ջուր. »

« Զի մինչ ընդ ջինջ ոստեար ընդ ջուր  
« Դըմակդ ի վեր, երեւեցան առականքդ: »

— « Եթէ ընդ այդ՝ բըրբիջ բառնալ էր ինչ հարկ,  
« Ինձ մանաւանդ քան քեզ, Այծիկ, են  
( իբրք անկ. »

« Զի քո յետոյք միշտ արեւուն կայ նշաւակ,  
« Եւ չունի դոյզնն դըմակիկ պատրուակ: » —

Իանք առակիս՝ թէ ոչ պարկէշտ,

Այլ խոր ծածկէն իմաստ եւ հեշտ.  
Խրատ հըպարտին եւ անխորհուրդ,  
Որ թերութեանց անձին անփոյթ՝  
Զմերձաւորին վըսպաւ փոքու  
Լըկտեալ Ժըպրհի դալըծաղու:

Զ

ԳՈՐՏԻ ԽՆԴՐԵՆ ԹՍԳԱԻՈՐ  
ՅԱՐԱՄԱԶԴԱՅ

Զանձրացեալ հուսկ և Գորտուց պար  
Ի վաղէմի վարչութենէն ռամկավար,  
Զայն ամբարձին առ դիցնն Հայր.

- « Լուր մեզ, ո՞վ մեծըք Զըրուանեան,
- « Որ յակնարկելէք շարժես զհամայն,
- « Տո՛ւր թագաւոր մեզ զմն ըզգաստ,
- « Զի լուիցէ զգաս մեր և փաստ.
- « Զի գու հայր՝ կաս յերկինս ի վեր,
- « Խըարոց ընդ մէջ՝ անբա՛ւ եթեր: » —

Դիպեալ պահու բարբառստիկ՝  
Բողոքարկու ազնն գորտեան,  
Զեղէն յերկար անըսելիք,  
Եւ ըզննդրեալն արբայ նկալան:  
Քայր լուսաձեւ՝ նա ի յարկայ՝  
Ի տամուկ կայս մերի լըղակաց:  
Այլ շառաչունն ահաւոր  
Զոր ի վայրէջան դարձեաց՝

Ահաբեկեաց զազգն անզոր .  
 Գողցես թափեալ ի մըտաց ,  
 Հա ոմն ի ծակ , ոմն ի մօր՝  
 Բարձաւ Գորտեանն ի միջոյ :  
 Իսկ թագաւորն այն երկնառաք ,  
 — Յաճուժեան տիպ և օրինակ , —  
 Կամ թէ ասել իբրու գըշույ ,  
 Ըզգնայր ի լուղ հեզիկ հոլմով՝  
 Ընդ տարրն լոյժ երեքալով :  
 — Չաղբ և ըզճեա թէ զարքայնս  
 Երբէք գիտել ցանկանայցես ,  
 Յերկինս ի վեր մի զուր հայնս ,  
 Քանզի բուսեալ տունի է յերկրէ .  
 Կոճղ անարգիլ և անհէժեթ ,  
 Որ չըգիտեմ՝ ո՛ւստ կամ ո՛րպէս  
 Արամաղդայ անկեալ ՚ի ձեռս ,  
 Գորտուց աբուա արքայ և պետ :  
 Անցին աւուրք երկու երեք՝  
 Դարձեալ Գորտուց ըօի ահաբեկ .  
 Հաղիւ ուրեմն ինչ իշխէին՝  
 Հեռուստ գիտել զդէմն արքային :  
 Այլ մինչև ցերբ անհրմուտք  
 Հեղ արքային ելով բարուց՝  
 Գորտք մեր կայցեն ծակամուտք :  
 Հուսկ ասպա ոմն ի նոցունց ,  
 Գորտ քաջասիրտ , ոչ այր ոք գուն ,  
 Թողեալ ի շամբ զիւրական տուն ,  
 Հուպ առ արքայն մերձենայ ,  
 Ի ի վեր առեալ զճապուկ թաթիկ ,  
 Ձըննէ զինչ ոք իցէ նա :  
 Եւ առ ժամայն հարեալ մըխերձ  
 Մինչև ի խոր լըճին ի խիճ ,

Ի վեր անդուստ ոստնու՝ քաջիկ  
 Ի լայն քամակ թագաւորին  
 Որ լուս տանի աշխոյժ բեռին :  
 Գովեաց զնովաւ սա ոտամբ՝  
 Ծափ ըզճափի հար ձեռամբ ,  
 Եւ առ ընկերքն գոչեաց .  
 — « Արիք Գորտեր քաջամոյն ,  
 « Ի բաց թողէք զահ և զհոյն ,  
 « Թողէք զերկիւղ անգր ի բաց : » —  
 Գունդն անարիւն ի քաջին ձայն  
 Յական քըթթել ի դուրս ոստեան .  
 Եւ այն խուժդուժ սինլըքորք ,  
 Անսիրտք , երկչոտք և անզորք ,  
 Որոց երէկ չըգոյր անուն ,  
 Պէս Տիտանեանց արդ կան կանգուն .  
 Ոմն յոտն ի մասն հարկանէ սլար ,  
 Այլ ոք նրմին կայ ծափահար .  
 Միւս ոմն ի գոչ կոկորդալիւր ,  
 Լընու ըզջուրս և շուրջ գեղախիւր :  
 Այլ աստ նոր ռազմն ահաւոր :  
 Բորբոքեցաւ ի նոյն հետայն ,  
 Ի ի ճակատուն տեղու՞մ անկան  
 Անդն մարտիկք բիւրաւոր :  
 Յայնժամ Գորտք ծէրք դարձեալ յերկինս ,  
 Չայնս ամբարձին գանգատալիս .  
 — « Ձինչ մեղաք քեղ , Արամաղդ ,  
 « Հիմքօ մեղ այս սլատուհասդ .  
 « Թագաւոր զոք մէք խընդրեցաք ,  
 « Համարելցին մեղ այս մեղանք .  
 « Այլ թագաւոր ոք կենսակիր ,  
 « Ի ոչ իբր ըզսա կոճղ անյարիր :  
 « Լուր մեզ , սղէ , և թող աշխարհ ծանիցէ ,



« Թէ Արամաղդ հայր աստուածոց գըթած  
(է: » —

Արագ լուաւ Հայրն Արամաղդ.

Ի լինն անդէն (Թեատարած՝

Ի գաւառացն էջ ամպաջու

Կապոյտ Կըռուենին՝ Ի կսուց հասու:

Եւ ոչ յերկար ինչ յամելով՝ առ ետեղ

Չաստուածասաստ ըզբարկութեան մըրուր հեղ՝

Ըզգըլետով խեռ ապստամբաց,

Եւ չանխայեաց իսկ անմեղաց.

Այլ համառօտ կարգեալ դատ՝

Չամենն արար դատապարտ.

Յանյադ պորտոյն յանելբանդ.

Ի ճաշ, յընթրիս և յակրատ: —

Ի զուր Գորտեան անկեալ յորկոր Կըռընկանն՝

Յակնակապճաց ոստեալ աչէր՝

Թաթեր՝ ոտիկք յայերս յերեր,

Յողորմ հաղադ՝ դարձեալ յերկինըս կարդան:

Եւ զինչ անտուստ Հայրըն դից.

— « Լըռեցէք, այ ժանաք, և կորէք.

« Շատ իսկ տաղտուկ էք բնաւից

« Եւ գըթութեան տեղի ձեղ չիք:

« Այլ թէ կանչէք՝ օրհաս քան զայդ գառնաւ

(Գոյն

« Գիտեմ՝ անկեալ էս խեղադար ձեր գըլլոյն: » —

Ոչ է արդար Արամաղդ.

Գորտեանն՝ անմիտ անխմաստ:

Այլ իմ թողեալ զերկոսեան,

Քեզ ասեմ, մարդ չուսուական.

Մի յաշխարհիս չարալից

Կըթեւ ըզհետ ցընորից.

Եթէ բարիք և թէ չարք,

Հանդիպեսցին պատահալք,

Ընկալ դամեն անդորր հոգւով

Չարագունին խէթ ունելով:

է

ՁԻՆ ԱՌԱՐԱՄԱՉԳ

Շատ է քեզ այն որ զինչ եւ էս,

Մի յաւելին ակըն դիցես:

Ի ժամանակս անդ առաջինս,

Յորժամ մարդիկ ընդ երկնայինս

Խօսել, զինչեւ եւ դատել

Մարթանային անարգել,

Չայս Երեմարն անխմաստ

Ասաց առ վեհն Արամաղդ. —

« Առատաձիր, գիտեմ, ո՞վ Հայր, եղեր յիս

« Տալով կազմած մարմնոյս խմուժ քաջահիւս.

« Այլ քանի՞ վաղքս իմ ընեկն շոյտ երագ,

« Թէ սրունքս էին սուղ ինչ երկալք եւ բարակ.

« Եւ պարանոց՝ պէս կարապին թէր կամար,

« Քաջիկ դիմաջըս ընեկն իրբըդ յարմար.

« Առատանայր յիս արուձիւն եւ կորով՝

« Թէ լայնալիր էի լանջիւս այս խմով:

« Եւ զի զգործոց քոց ըզբլուելս մարդ՝ էս կըրեմ՝

« Աս ինչ համեաքս ինձ կարկատունք մաշկեղէն .

« Վա՛յ, Թէ բնուԹիւն տայր ինքնաբոյս

« Համեաս ունել ինձ ի Թիկունս : » —

Իսկ Արամազդ, բազմագուԹ հայրն աստուա-  
(ծոց,

Հաճեալ ուղղել ըզձիոյն բարս խեռ՝ ւ անփորձ,

Հանէր անդրէն զուղտն անարգել ի հանգէս,

Սըրունք երկար, լանջքն լայն չի, վիզ կարապի .

Եւ կառուցեալ սաարտս յողինըն բըրդդէս :

Տեսեալ ըզնա ձիոյն՝ հարաւ զգողանի :

Անդ Արամազդ պարզեալ զճակատ մըրա-  
(յօն,

— « Շընորհ, ասէ, զեմոց խընամոց կալջեր օն .

« Ի ցանկուԹիւն մի՛ զբեղ մաշէր դու ի զուր .

« Ե՛րթ և քոյովբորդ լեջիր դո՛հ մըտադիւր : » —

## Ը

### ՏՆԱՇԻՆ ԱՍՏԻԿԵՅԻՆ

Չեռն արկ շինել երբեմն ըզտուն

Ատտիկեցի ոմն խնաստուն .

Այլ ոչ հիմանց ըսկիզբն արար .

Զձեղունն յերկիր արկ ի խոնարհ :

ԸզչինուԹեանըն տարօրէն,

Մարդիկ զվանէրըն հարցանեն :

— « Քանզի խորհիմ, ասէ, ընդ հուպ ածել կին,

« Եւ ի շըրջել նորա ըզյարկն վէր ի վայր,

« Տուն իմ կալցի զգիրս անկաւոր և յար-  
(մար : » —

Սովաւ խրատէ ըզքօնն՝ ըզնեւ կանանին :

ՎԵՐՁ





